On April 27, 1956, the annual general meeting of the Armenian community of Morocco, chaired by Garo Sarian, was held in Casablanca with the participation of about 30 people. Vahan Hampardzoumian reported on Armenians' number in Morocco: 24 families (62 persons) in Casablanca, four families (8 persons) in Rabat, two families (3 persons) in Mazagan, two families (6 persons) in Safi, two families (4 persons) in Marrakesh, two families (3 persons) in Gazba-Taala, one family (2 persons) in Fez, one family (2 persons) in Meknes, in total - 38 families (90 persons), with three more families (10 persons). Thus, the exact number of Moroccan Armenians is 40 families (100 persons). 12 Armenians moved from Morocco to the USA, Canada and Yugoslavia. They were mostly engaged in trade, there were also officials and craftsmen. During five years this community has voluntarily donated about 700 thousand francs to pan-Armenian events. The community has given two benefactors – Avedis Chakerian and B. Bergamali, who, as already mentioned, posthumously bequeathed their houses and wealth to the AGBU. On the same day, a requiem service was held at the Cathedral of

[32] See «Հայաստանի կոչնակ», 27.10.1956, 929.
[33] See France 1953, 132.
[34] See «Յառաջ», 26.04.1956.

Casablanca on the initiative of Father Krikor Khacherian for the victims of the Armenian Genocide, with Archimandrite's explanations in French about the significance of the commemoration day[35].

In May 1958, the Armenians of Casablanca hosted the American-Armenian public figure George Mardigian and the American-Armenian journalist and correspondent for Arab newspapers Levon Keshishian with their wives. A reception was held at the Mahraba Hotel, during which the active members of the community spoke: Vahan Hampardzoumian, Jirair Apigian, Yervant Karabilikian, K. Baltayan, Mrs. Haroutiunian, Azad Surmenian, Garo Sarian, Berj Varjabedian and Herair Serapian[36]. Levon Keshishian (1917–1984), being the correspondent of Moroccon Radio and TV for some years, from time to time also contributed to the Armenian press with correspondences about the Armenians of Morocco.

In 1959 the number of the Armenians in Morocco was the same – almost 100. To the names already mentioned the names of Haigaz Asadourian, Jirair Surmenian and V. Torosian can be added. As there was no law on citizenship in Morocco, that gained its independence in 1956, the Armenians were not considered Moroccans[37], the authorities recognized the local Armenians as an independent community[38].

On March 30, 1959, Jean Ballard (1893–1973), a French writer and the founding editor of "Les Cahier du Sud" revue was hosted in Morocco. Taking the opportunity, local Armenians organized a tea party in his honor, as "Les Cahier du Sud" repeatedly published samples of Armenian poetry translated by the French writer and translator Luc-André Marcel. Members of the Moroccan Armenian community – Sarian, Apigian, Hambardzoumian, Karabilikian, Araxi Varoujan, made speeches. Mr. and Mrs. Ballards spoke about their acquaintance with the Armenians and Armenian poetry. Ten Armenians subscribed "Les Cahier du Sud," while on behalf of Armenians in Morocco one-year subscription of the magazine was provided to the Armenian schools in Beirut, Raincy, Tehran, Montevideo, and Paris[39].

---

[35] See «Յառաջ», 06.05.1958.
[36] See «Յառաջ», 29.05.1959.
[37] See «Ազդակ», 22.09.1959.
[38] See **Ղասաբյան** 2003, 391.
[39] See «Յառաջ», 08.04.1959.

In the same year, in the Cathedral of Casablanca the victims of the Armenian Genocide were commemorated again. Archimandrite Krikor Khacherian conducted a liturgy in the Catholic style and preached in Armenian and French. The French consul of the city and many Frenchmen were present[40]. The solemn liturgy and requiem service was repeated next year, on May 1, 1960, initiated again by Archimandrite Khacherian[41].

After the declaration of independence of the North African countries, the USSR actively cooperated with the newly independent states, regularly sending also Armenian specialists and art professionals.

Who was Who among Moroccan Armenians

Avedis Chakerian, a bookseller living in Casablanca since the early 1920s, has been a national philanthropist and the chairman of the board of the Armenian community. His bookstore was situated in the busiest street of the city. Chakerian died in 1941, in Casablanca, bequeathing most of his property to the Armenian Seminary in Beirut[42].

Azad Surmenian, one of first Armenians settled in Casablanca, an owner of a trading company, has established links with the USA[43]. He owned a factory of rubber boots, and his brother – a factory of plastic items and toys[44]. Azad Surmenian's widow, Berjouhi Surmenian remained in Casablanca and was still alive in 2002. Both their son Jirair Surmenian (1925–2017) and the grandson Enoch Surmenian were born in Casablanca. Jirair owned the Sukaf Café in the city, while Enoch studied at the Lycée Lyautey of Casablanca. Enoch later moved to France and settled in Neuilly-sur-Seine.

Countess Araxia Patrimonio (nee Esmerian, born in 1896) was the President of the French Red Cross in Morocco. In Casablanca, she ran the "Patrimonio nee Esmerian Marguerite Africaine Immobilieres" real estate company. A wife of a Spanish count, Araxia Patrimonio died in Casablanca.

---

[40] See «Յառաջ», 16.05.1959.

[41] See «Յառաջ», 04.05.1960.

[42] See «Հայաստանի կոչնակ», 09.08.1941, էջ 787.

[43] See Visiting buyers and officials, "International Commerce," vol. 76, 1970, p. 48.

[44] See **Ղասաբյան** 2003, 391.

Writer Diran Alexanian, born in Atabazar, Ottoman Empire, after the Smyrna fire left with his parents for Greece, then Morocco. His most memorable writing is the book "Rainbow on the Seas" in Greek. Alexanian died in 1968, in Casablanca[45].

One of the active figures of Casablanca Armenian community was Krikor Harutiunian, a native of Yerznka, who settled in Algeria, in 1914 and then moved to Morocco, where he was engaged in coffee and grocery trade and managed a hotel in Casablanca. He dealt with the problems of Armenian immigrants, educational and religious issues. In 1969 he wrote a letter to Yerevan, to the Committee on Cultural Relations with the Diaspora, expressing a wish to repatriate[46].

Artist, jeweler, sculptor, expert of antiquities, trader in precious stones Vahan Markarian (born 1888, Constantinople) lived in Casablanca, in 1933–1969. In 1962–1964 he had personal exhibitions; in 1969 he returned to Istanbul[47].

Kourken Salibian was born in 1912 in Adana, Turkey. His family went to Beirut circa 1919 and in 1935 he moved to Casablanca. Salibian owned "Oceanways Trading Corporation" and "Al Maghreb Trading Corporation," importing bales of used clothing, U.S. Army surplus. He married Agnes Artinian from Beirut in 1946. They had three children, the first one, Ara Salibian, was born in Beirut, the others – in Casablanca. The Salibians moved to New York at the end of the 1950s, but had an apartment in Casablanca until the early 1970s. One of Salibian's children is the American writer Cathy Salibian (born 1954), according to whom her family adhered to Armenian traditions[48].

Lawyer and writer Vahan Hampardzoumian (1896, Govdun village of Sebastia, Ottoman Empire – 1964, Casablanca), who had lost his entire family during the Armenian Genocide, worked in France, being an active public figure and writer in Armenian periodicals. In 1939 he left for Algeria to defend the interests of one of his compatriots. Because of the war he stayed in Algeria, where he married a French woman and had a daughter, Mireille Hampardzoumian, who later lived in France. After the establishment of peace, Vahan settled in Casablanca, where he established his legal office. Hambardzoumian died there and

[45] «Մասիս», 22.09.1968.
[46] See NAA, f. 875, l. 4, a. 360, p. 2–4.
[47] See about him «Արեւ», 25.09.1965.
[48] Email correspondence with Cathy Salibian (14.05.2020, 20.08.2020).

was buried in El Hank Cemetery of Casablanca[49]. Vahan Hampardzoumian might have been the correspondent of "Haraj", Armenian daily of Paris, appearing under the pen-name Vahan[50] from Morocco.

Among the Moroccan Armenians the names of the physician Arto Helvejian and the dentist G. Kabakdjian are also mentioned[51].

Roger Karoutchi, now a well-known French politician, the French Ambassador to the Organization for Economic Co-operation and Development, was born in Casablanca, in 1951, into the family of a Moroccan-Jewish father and Armenian mother. He strongly opposes Turkey's membership to the Council of Europe and often speaks out on the Armenian Genocide.

Llatie Amor Sarkissian, a Paris-based writer, was born in Tangier, in 1954 to an Armenian mother and Spanish-Moroccan father (Amor). Her mother, Seda Sarkissian Utudjian (1917, Yerevan – 1957, Paris, buried in Tangier), was the daughter of Armenak Sarkissian from Georgia (died in Cairo) and Arax Utudjian (1892, Constantinople – 1992, Casablanca). Llatie Amor Sarkissian lived in Casablanca until 1989, where she worked at the Omar Khayyam Bookstore, organizing literary and artistic events. She left Morocco in 1989 and often went back to see her children and grandchildren. In 2015, the novel "Armenian Sonata" by Llatie Amor Sarkissian and Franck Perrussel was published in French. It includes the life of Llatie's grandmother Arax, as well as the letters written from Morocco by Arax to her granddaughter. The authors also presented the book in Moroccan cities[52].

Syrian-Armenian physician Toros Toranian, who attended a conference of Arab physicians in the Tunisian capital in 1979, testified that there he met Dr. Tourian, a resident of Casablanca. The latter admitted that on the African coast he earned money, but unfortunately he lost his essence[53]. These words prove the widespread assimilation and alienation to which the small Armenian communities of North Africa have been subjected...

[49] See **Համբարձումեան** 2000, 7: In September 2000 I met Mireille Swensson-Hampardzoumian in Yerevan and had a conversation about the Armenians in Morocco.

[50] See, for instance, Յառաջ, 24.02.1956.

[51] See **Ղասաբյան** 2003, 391.

[52] About the book see Sabrina El-Faïz, Culture Le vécu d'une Arménienne au Maroc, «L'Economiste», 2015, May 27.

[53] See **Թորանեան** 2004, 47:

In 1950, Armen Zarian – an Armenian architect from Italy, won the International Award for the design of a 251-storey residential Moroccino district to be built in Tangier. Zarian lived in Morocco from 1950–1954 with his German wife, Maria Gawronski-Zarian: their daughter, teacher and poet Sirvard Zarian (now living in Canada) was born in 1952 in Tangier. Armen Zarian worked at architect Messina's workshop as a studio manager, supervised the construction of Moroccino district and at the same time he won the prize for interior design and furnishings of the Tangier Parliament.

According to a statistic of 1984, 200 Armenians lived in Morocco[54]. Most Morocco-born Armenians moved to France, as did Casablanca-born Louis Karabilikian, who studied at the Jules Ferry School in 1939–1950 and City Technical High School in 1950–1954, as well as Jules Asadurian, who was born in Casablanca and currently lives in Cannes, France.

From time to time Armenians from various countries, particularly from France, come to live and work in the Kingdom of Morocco on temporary basis. As Finland-based artist Aramayis Avetisyan testified, at the exhibition of Finnish artists in Casablanca he was approached by an EU representative in Morocco, who spoke fluent Western Armenian, then recited poems by Armenian poets Siamanto and Varoujan. Then another person joined their conversation and introduced himself as a French-Armenian[55]. In 2005, French-Armenian ex-judoka Roger Hairabedian (born 1955) moved to Marrakech and established the "Es Saadi" casino there. He is considered as "the godfather of Moroccan poker" and won the championship of poker competition in Morocco, in 2012[56].

It is also important to note that diplomatic relations between the Republic of Armenia and the Kingdom of Morocco were established in June, 1992. From 1994 to 2009 the ambassadors of the Republic of Armenia in Egypt are also accredited for Morocco. Since 2004 Karen Minasyan is the Honorary consul of Morocco in Armenia, while Ms. Mina Tounsi is the Ambassador of Morocco in Armenia since 2013 (residence in Kiev). In 2015 the Armenian-Moroccan Business Forum was held on April 7–9, in Yerevan[57].

---

[54] See NAA, f. 875, l. 13, a. 13, p. 4–5.

[55] See «Ազգ», 21.09.2007.

[56] See A new victory for Roger Hairabedian, "Morocco News," 2012, July 20.

[57] See https://www.mfa.am/en/bilateral-relations/ma

According to Ghasabyan, in 2003 there were 25–30 Armenians in the Kingdom of Morocco[58] – there are not any details about them.

Today, the only Armenian-related site in Morocco is the Rue d'Arménie (Street of Armenia) in Casablanca.

Conclusion

As a conclusion we can note that the presence of the Armenians in Morocco was similar to those of other Western and Central countries of North Africa during their colonial period – occasional, non-significant and dispersed all around the country, although with continuous efforts of unifying and organizing national life. The Armenian presence in Morocco lasted mainly six decades (the 1910–1960s), and the number of Armenians never exceeded 400 people. As in all North African countries, the Armenians appeared in those countries as a result of the Armenian Genocide in the Ottoman Empire from 1915 to 1922 and were mainly humble, hard-working traders and craftsmen, enjoying the sympathy and trust of the colonial authorities and local people. And likewise in the neighboring countries, after Morocco's independence declaration, the Armenians gradually left the country, moving to Europe and Americas.

Because of small number it did not have the model of typical Armenian communities with its usual infrastructures (a school, a church, etc.), although it had a special Community Council and a branch of AGBU. They were connected to the Armenian church in France and commemorated the victims of the Armenian Genocide.

What is most appreciable about this small community is that its members, being self-sufficient, have always given a helping hand to compatriots in different countries – the fact that during five years the Moroccan Armenians voluntarily donated about 700 thousand francs to pan-Armenian events, deserves the highest estimation.

BIBLIOGRAPHY

Թորանեան Թ. 2004, Ուղեւորութիւն դէպի Թայլանտ ու Չինաստան, Հալէպ, «Կիլի-կիա», 223 էջ:

Համբարձումեան Վ. 2000, Գիւղաշխարհ, Երևան, «Ամարաս», 271 էջ:

[58] See **Ղասաբյան** 2003, 391.

Ղասաբյան Զ. 2003, Մարոկկո, «Հայ Սփյուռք» հանրագիտարան, Երևան, Հայկական հանրագիտարան հրատարակչություն, 732 էջ:

Մաղալյան Ա. 2004, Մոռացված էջեր (Սողոմոն Թեհլերյանի կյանքից), «Դրոշակ», Երևան, թ. 4, հոկտեմբեր-դեկտեմբեր:

Մանր ժամանակագրություններ: XIII–XVIII դդ., կազմ. **Հակոբյան Վ.Ա.**, հ. 1, Երևան, ԳԱԱ հրատարակչություն, 1956, 453 էջ:

Մարտունի Ալ., Կուսակցությունները գաղութահայության մեջ, Թիֆլիս, «Պետհրատ», 1924, 141 էջ:

Պետրոսյան Վ. 1984, Հայկական էսքիզներ, Երևան, «Հայաստան», 256 էջ:

Ստեփանյան Գ. 1973, Կենսագրական բառարան, հատոր Ա, Երևան, «Հայաստան», 382 էջ:

«Ազգ», Երևան, 2007, սեպտեմբերի 21:

«Ազդակ», Պէյրութ, 1959, սեպտեմբերի 22:

«Ալիք», Թեհրան, 1936, յունուարի 19:

«Արաս», Պուքրէշ, 1934, օգոստոսի 2:

«Արաքս», Ալեքսանդրիա», 1942, փետրուարի 28:

«Արեւ», Գահիրէ, 1965, սեպտեմբերի 25:

«Արեւելք», Իսթանպուլ, 1934, դեկտեմբերի 22:

«Երիտասարդ Հայաստան», Նիւ Եօրք, 1918, մայիսի 18:

«Զարթօնք», Պէյրութ, 1950, յունիսի 8:

«Լուսարձակ», Վառնա, 1924, յուլիսի 23:

«Հայաստանի կոչնակ», Նիւ Եօրք, 1941, օգոստոսի 9, 1956, հոկտեմբերի 27:

«Հայրենիք», Պօսթըն, 1936, յունուարի 8, 1949, մարտի 5:

«Հորիզոն», Թիֆլիս, 1913, նոյեմբերի 9:

«Ձայն Փարիզի», Փարիզ, 1949, փետրուարի 4:

«Ճակատամարտ», Կ.Պոլիս, 1922, ապրիլի 28:

«Մասիս», Պէյրութ, 1968, սեպտեմբերի 22:

«Յառաջ», Փարիզ, 1936, յունուարի 20, 1950, փետրուարի 17, 1953, փետրուարի 17, 1954, մայիսի 15, 1955, ապրիլի 17, 1956, փետրուարի 24, ապրիլի 26, մայիսի 30, 1958, մայիսի 6, 1959, ապրիլի 8, մայիսի 16, մայիսի 29, 1960, մայիսի 4:

«Յուսաբեր», Գահիրէ, 1932, օգոստոսի 2, 1936, յունուարի 10:

Caius Crispus Sallustius The Historian Translated into English, by J. Rowe, London, 1726, 250 pages.

«L'Economiste», Rabat, 2015, May 27.

France, Directory of Importers, MSA Financed Commodities, United States. Mutual Security Agency. Special Mission to France for Economic Cooperation, 1953, 270 pages.

"International Commerce," Bureau of International Commerce., vol. 76, 1970.

"Morocco News," Rabat, 2012, July 20.

«Nouvelles d'Arménie Magazine», Paris, 2016, Février.

ԱՆԾԱՆՈԹ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԻ ՄԱՍՆԻԿ. ՀԱՅԵՐԸ ՄԱՐՈԿԿՈՅՈՒՄ

ԲԱԽՉԻՆՅԱՆ Ա.

Ամփոփում

Բանալի բառեր՝ հայեր, Մարոկկո, Հյուսիսային Աֆրիկա, Կասաբլանկա, հովվական այց, Սողոմոն Թեհլիրյան, Վահան Համբարձումյան:

Մարոկկոյում հայերի ներկայությունը հար և նման է Հյուսիսային Աֆրիկայի արևմտյան և կենտրոնական երկրների գաղութային շրջանում եղած գաղթօջախների պատմությանը՝ պատահաբար այդ շրջանում հայտնված և ամբողջ երկրով մեկ ցրված ընտանիքներ և անհատներ՝ միաժամանակ ազգային կյանքի համախմբման և կազմակերպման շարունակական ջանքերով:

Հայերի ներկայությունը Մարոկկոյում տևել է վեց տասնամյակից մի փոքր ավելի (1910–1960-ականներ), նրանց թիվը երբեք չի գերազանցել 400-ը: Ինչպես Հյուսիսային Աֆրիկայի բոլոր երկրներում, հայերը Մարոկկոյում հայտնվել են գլխավորապես 1915–1922 թվականներին Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության հետևանքով: Գաղթականների մեծամասնությունը բնակվել է Կասաբլանկայում, քիչ թվով նաև՝ Ֆես, Ռաբաթ և այլ բնակավայրերում: Մարոկկոյում անկախության հռչակումից հետո հայերն աստիճանաբար հեռացել են՝ տեղափոխվելով Եվրոպա և Ամերիկա:

Փոքրաթիվ լինելու պատճառով մարոկկահայ համայնքը չի ունեցել դպրոց և եկեղեցի, թեև գործել են հատուկ համայնքային խորհուրդ և ՀԲԸՄ մասնաճյուղ: Նրանք կապված են եղել մասնավորապես Ֆրանսիայի հայ եկեղեցու հետ:

Մարոկկաբնակ հայերի մեջ աչքի ընկնող անուններ են Կասաբլանկայի գրախանութի տեր Ավետիս Չաքըրյանը, Բ. Բերգամալին, որն իր միլիոնները կտակել է ՀԲԸՄ-ին, իրավաբան Վահան Համբարձումյանը, Մարոկկոյում ֆրանսիական Կարմիր խաչի ղեկավար կոմսուհի Արաքսիա Պատրիմոնիոն (Էմերյան): Որոշ ժամանակ այստեղ է բնակվել նաև Սողոմոն Թեհլիրյանը:

Այսօր Մարոկկոյում հայերի ներկայության միակ հետքը Կասաբլանկայի Հայաստան փողոցն է (rue d'Armenie):

ЧАСТИЦА НЕИЗВЕСТНОЙ ИСТОРИИ: АРМЯНЕ В МАРОККО

БАХЧИНЯН А.

Резюме

Ключевые слова: армяне, Марокко, Северная Африка, Касабланка, пастырский визит, Согомон Тейлирян, Ваан Амбарцумян.

Присутствие армян в Марокко напоминает историю армянских поселений в колониальном регионе западной и центральной части Северной Африки.

Армяне жили в Марокко на протяжении полувека (1910–1960-е годы), но их число никогда не превышало 400 человек. Как и во всех странах Северной Африки, армяне появились в Марокко в основном в результате геноцида, осуществленного в Османской империи в 1915–1922 годах. Большинство из них жили в портовом городе Касабланка, гораздо меньше армян обосновалось в Фесе, Рабате и других городах. После провозглашения независимости в Марокко армянское население постепенно стало покидать страну, переезжая в Европу и Америку.

В силу малочисленности армянская марокканская община не имела характерных для колоний инфраструктур (школы, церкви), однако здесь были основаны совет общины и филиал Армянского всеобщего благотворительного союза. Армянская община Марокко поддерживала отношения с армянской церковью во Франции.

Известными марокканскими армянами были владелец крупнейшего книжного магазина в Касабланке Аветис Чакирян, Б. Бергамали, завещавший свои миллионы Армянскому всеобщему благотворительному союзу, адвокат Ваан Амбарцумян, глава французского Красного креста в Марокко графиня Араксия Патримонио (Эсмерян), Согомон Тейлирян.

На сегодняшний день на присутствие армян в Марокко указывает улица Армении (rue d'Armenie) в Касабланке.

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ*
Պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
armenaraksyan@mail.ru

«ԲԱԶՄԱՎԵՊԸ»՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՆԱԳՈՒՅՆ ՀԱՆԴԵՍ

Բանալի բառեր՝ Սուրբ Ղազարի վանք, Գաբրիել Այվազովսկի, Ղևոնդ Ալիշան, Բազմավեպի խմբագիրներ, Մխիթարյան միաբանություն, Մխիթարյան հրատարակություններ, հոգևոր հայրենիք:

Ներածություն

Հայ ժողովրդի հոգևոր մշակույթի, գիտության և մամուլի գործիչների մի զգալի մասը դարեր շարունակ գործունեություն է ծավալել հայրենիքի հեռու՝ օտար ափերում: Հատկապես ակնառու է Վատիկանում՝ Սուրբ Ղազար կղզում հաստատված հայ մտավորականների գործունեության արդյունքը: XVIII դարի սկզբներից հայազգի մի խումբ հոգևոր գործիչներ հաստատվելով այստեղ, իրենց ուժերի անմնացորդ նվիրումով ծառայեցին հայագիտությանը և հայապահպանության անչափ կարևոր գործին: Նպատակն էր բարեկիրթ և ուսումնական ազգերից հետ չմնալը, համայն հայության հոգևոր և մշակութային *վերելքին* նպաստելը: Մեր ժողովրդի հոգևոր ու բարոյական արժանապատվությունն իրենց մեջ մարմնավորող այրերը՝ Մխիթարյան միաբանության հիմնադիրներն ու անդամները, նաև մամուլի միջոցով փորձեցին նպաստել համազգային, հայրենասիրական գաղափարների տարածմանն ու արմատավորմանը հայության լայն զանգվածների շրջանում: Այդ նպատակով հիմնադրված «Բազմավէպը» իր «բովանդակության հարստության, համազգային գաղափարների արծարծման, նաև բարձրարվեստ ու նրբաճաշակ տպագրության շնորհիվ լայն ընդունելության է արժանացել հայկական բոլոր գաղթավայրերում: Առաջինն է հայոց մեջ մարմնավորել ժողովրդանվեր լրագրության գաղափարը»[1]:

* *Հոդվածը ներկայացվել է 24.12.19, գրախոսվել է 13.02.20, ընդունվել է տպագրության 04.12.20:*

[1] Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան 2002, 167:

Մխիթարյան նախորդ հրապարակությունները: «Բազմավեպը» որպես համահայկական բնույթի և բովանդակության պարբերական

Հայ ժողովրդի պատմական ճակատագիրը իր խոր կնիքն է դրել նրա ողջ մշակույթի վրա: Դժնի ճակատագրի ելևէջները դրոշմված են նաև հայ պարբերական մամուլի սկզբնավորման, ընթացքի, բնույթի և բովանդակության վրա: Քաղաքական անագորույն վիճակը, երկրի բռնի բաժանումը տարբեր հատվածների, գաղթօջախների առաջացումը տարաբնույթ պայմաններ են ստեղծել հայության քաղաքական, մշակութային և հոգևոր-բարոյական արժեքների ստեղծման համար: Այդ առումով և այդ կտրվածքով քննելիս բոլորովին էլ զարմանալի չէ, որ հայ առաջին պարբերականը՝ «Ազդարարը» և առաջին շարքում նաև «Բազմավէպը», հիմնադրվել են Հայաստանի և Հայկական լեռնաշխարհի սահմաններից դուրս: Հայ մամուլի պատմության անդաստանում հատկապես հիշատակելի են Մխիթարյան միաբանության ներդրումն ու ջանքերը: 1717 թ. սեպտեմբերին հայազգի մի խումբ հոգևորականներ Մխիթար վարդապետ Սեբաստացու առաջնորդությամբ իջևանեցին Իտալիայի Վենետիկ քաղաքից դեպի հարավ գտնվող Սուրբ Ղազար կղզում: Այդ կղզու անունը հետագայում պիտի նշանավոր դառնար հայ մատենագրության, գիտության և մշակույթի էջերում: Մխիթարյանները արդեն երեք դար շարունակ էական ավանդ են ներդրել հայ մշակույթի պատմության մեջ՝ հրապարակելով հայագիտական կարևոր նշանակություն ունեցող պատմական և պատմագիտական սկզբնաղբյուրներ, բառարաններ, լեզվագիտական, աշխարհագրական, պատմական ուսումնասիրություններ, անտիկ գրականության թարգմանություններ: Հիմնադրման առաջին իսկ տարիներից Մխիթարյան միաբանությունը հանդիսացել է հայագիտության և կրթական-մշակութային խոշոր կենտրոններից մեկը: Միաբանության կրթօջախներում ուսումնառություն են անցել հետագայի նշանավոր մի շարք գործիչներ՝ պատմաբան Միքայել Չամչյանը, բանաստեղծներ Մկրտիչ Պեշիկթաշլյանն ու Դանիել Վարուժանը, պատմավիպասան Ծերենցը, գրող, հրապարակախոս և հասարակական գործիչ Արփիար Արփիարյանը, հանրահռչակ դերասաններ Պետրոս Ադամյանն ու Վահրամ Փափազյանը և ուրիշներ: Մխիթարյան միաբանների մոտ հայոց լեզվին և հայ միջավայրին առնչվել են, ապա հայերենին տիրապետելու իրենց առաջին փորձերն է արել հանճարեղ բանաստեղծ Ջորջ Գորդոն Բայրոնը: Օտարազգի շատ հեղինակներ բարձր են գնահատել Մխիթարյանների դերակատարությունը հայկական մշակույթի, գիտության և մամուլի զարգացման գործում:

Մխիթարյանները բարձր պահեցին նաև հայ մամուլի անունն ու պատիվը: Նրանք մեկը մյուսի հետևից հրատարակեցին պարբերականներ, որոնք կոչված էին նոր մթնոլորտ ու նոր իրավիճակ ստեղծելու հայ գիտական մտքի և պարբերական մամուլի անդաստանում: Հայ անդրանիկ պարբերականը կարճ կյանք ունեցավ: Նրա փակվելուց երեք տարի անց՝ 1799 թ. Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Ղուկաս Ինճիճյանը լույս է ընծայում «Տարեգրութիւն» անունով պարբերականը՝ որպես «Յիշատակարան քաղաքական, պատերազմական, եկեղեցական և բանասիրական անցից և դիպուածոց աշխարհի»: Այն լույս տեսավ մինչև 1807 թվականը: «Տարեգրության» յուրաքանչյուր հատոր բաղկացած էր 884 էջից: Բոլոր նյութերը շարադրված են արևմտահայ աշխարհաբար լեզվով: Յուրաքանչյուր հատորում տեղեկություններ էին հաղորդվում նախորդ տարվա ընթացքում աշխարհում տեղի ունեցած քաղաքական անցքերի, մշակութային կյանքում եղած նորությունների, առևտրական կապերի և հարակից այլ երևույթների մասին: Մխիթարյան հաջորդ հրատարակությունը նույնպես Վենետիկում լույս տեսած «Եղանակ Բիւզանդեան» ամսաթերթն է, որը 1803 թ.-ից հրատարակվում էր կրկին Ղուկաս Ինճիճյանի խմբագրությամբ: Այս պարբերականում ևս նյութերը շարադրված են աշխարհաբար դյուրամատչելի լեզվով: Յուրաքանչյուր հատոր բաղկացած էր 288–300 էջից: Էջերը զարդարված են մանրանկարներով: Պարբերականում ավելի մեծ տեղ էր հատկացված հայոց բազմադարյան պատմության հարցերին, հատկապես հերոսական դրվագների նկարագրությանը, պատմական նշանավոր դեմքերի գործունեությանը: Այն գոյատևել է մինչև 1820 թվականը՝ շուրջ 17 տարի:

Մխիթարյան միաբանության երրորդ պարբերականը «Դիտակ Բիւզանդեան» երկշաբաթաթերթն է, որը լույս է տեսել 1812 թ. Վենետիկում, աշխարհաբար լեզվով: Նրա առաջին խմբագիրն է եղել Գրիգոր վարդապետ Գապարաճյանը: Այնուհետև պարբերականը խմբագրել են Մադաթիա Ֆյուսկյուլճյանը և Մանվել Ջախջախյանը: Թեև սույն պարբերականի լույս ընծայումն իրականացվեց Կ. Պոլսում հիմնադրված «Արշարունյաց ընկերության» նախաձեռնությամբ, սակայն նրա գաղափարական ու քաղաքական բովանդակությունը վերահսկվում էր Մխիթարյանների կողմից: «Դիտակ Բիւզանդեանն» ուներ ամսագրին հատուկ ծավալ, բայց բովանդակությամբ լրագիր էր, քանի որ լուրեր ու տեղեկություններ էր հաղորդում օրվա անցուդարձի «քաղաքական ու պատերազմական, բանասիրական ու եկեղեցական դիպվածների» վերաբերյալ: Պարբերականը ունեցել է հատուկ աշխատակիցներ, ովքեր պարզ ու

հասկանալի լեզվով հոդվածներ և այլ նյութեր են գրել գիտական աշխարհում տեղի ունեցող նորությունների մասին: Այն անդրադառնում էր ինչպես անցյալին, այնպես էլ իր ժամանակի պատմաքաղաքական իրադարձություններին, սակայն դրանց նկատմամբ ցուցաբերում էր չափազանց զգուշավոր մոտեցում: «Դիտակ Բիւզանդեանը» հրատարակվել է մինչև 1816 թվականը:

Մխիթարյան միաբանության հերթական պարբերականը 1843 թվականին լույս տեսած «Բազմավէպն» է, որն ինքնին նշանավոր է նաև նրանով, որ շարունակում է հարատևել մինչև օրս: Այն հանդես եկավ որպես օրագիր բնական, տնտեսական և բանասիրական գիտելեաց: Իսկ «Բազմավէպ» անունը հուշում էր, որ այն բազում բաներ վիպող է և բազմապիսի բաներ պատմող: «Բազմավէպի» առաջին խմբագիրը եղավ բազմափորձ և բանիմաց Գաբրիել Այվազովսկին, ով այդ պահին գտնվում էր ամենածաղկուն տարիքում՝ երեսունմեկ տարեկան հասակում և այդ ոչ հեշտ և շատ պատասխանատու պարտականությունները կատարեց ամենայն լրջմտությամբ՝ շուրջ վեց տարի: Իսկ խմբագրական խորհրդի անդամներն էին Ղևոնդ Ալիշանը և Հովհաննես Սորկունձյանը:

«Բազմավէպ» հանդեսում հաճախակի էին փոխվում խմբագիրները: Բավական է նշել, որ 1843-ից մինչև 1880 թվականը այն ունեցել է տասներկու խմբագիր (Գ. Այվազովսկի 1843–1849), Ղևոնդ Ալիշան (1849–1851), Օքսիենտիոս Գուրգենյան (1852–1853), Գրիգոր Ճելալյան (1854–1856), այնուհետև 1858–1861 և 1863–1866), Հմայակ Պապիկյան (1856–1861), Ա. Սիոնիկ (1862–1866), Նորայր Բյուզանդացի (1867–1868), Ա. Գարթանյան (1868–1870), Հ. Իսավերտյանց (1871–1872), Կ. Իսկենտերյան (1873–1875), Ա. Սուքրյան (1875–1876), Ա. Բասքանտիլյան (1877–1882):

Խմբագիրների այդպիսի հաճախակի փոփոխությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ միաբանության պատասխանատուները զգաստ և մշտարթուն հետևում էին հանդեսի բովանդակությանը և որոշակի պահանջկոտություն ցուցաբերում: Այդ նշանակում էր, որ որևէ խմբագիր կամ աշխատակից իրավունք չուներ խախտելու միաբանության կանոնադրությամբ սահմանված օրենքներն ու չափանիշները և օտար տարրեր մտցնելու կրոնական դավանանքի վարդապետության մեջ:

«Բազմավէպը» ասպարեզ ելավ նախ և առաջ իր ժամանակի թելադրանքով: Այն լեզվական առումով դյուրին և մատչելի հարթակ էր բացում հայ իրականության և աշխարհի իրականության զանազան ու բազմաբնույթ խնդիրները շոշափելու և այդ ամենը հայախոս զանգվածներին հասցնելու համար:

Իսկ XIX դարի կեսերն ու վերջերը իսկապես մի ցնցող ու արժեքային առումով հարափոփոխ ժամանակաշրջան էր հին աշխարհամասի ժողովուրդների կյանքում: Հայ իրականությունը, այդ իրականության և միջավայրի մեջ ապրող հայ մարդն ու քաղաքացին չէր կարող երկար կտրված մնալ աշխարհում ընթացող քաղաքական, հոգևոր-բարոյական, տնտեսական, մշակութային գործընթացներից: Եվ այդ բանում նրան օգնում և զորավիգ էին «Բազմավէպը» և Մխիթարյան միաբանության հայրերի հրատարակած մյուս արժեքավոր գործերը:

«Բազմավէպի» խմբագիրներն ու գլխավոր աշխատակիցները եղել են ժամանակի ուսյալ, զարգացած, կիրթ ու առաջադեմ անհատները ոչ միայն հայկական իրականության, այլև եվրոպական և համաշխարհային չափանիշներով: Նրանք քաջ հասկանում և պատկերացնում էին խնդիրների և հիմնահարցերի այն ամբողջ հրամայականը, որ ծառացած էր հայ ժողովրդի և հայ սերունդների առջև:

Զուշանալ, հետ չմնալ աշխարհում ընթացող գիտական, մշակութային, քաղաքական գործընթացներից, չմեկուսանալ սեփական միջավայրի պատերի ներսում՝ ահա այն կարգախոսն ու սկզբունքային մոտեցումը, որ առաջին իսկ համարներից որդեգրեցին «Բազմավէպի» խմբագիրներն ու Մխիթարյան միաբանության առաջնորդները: Այդ խնդիրները լուծելու համար հանդեսին անհրաժեշտ էր նախ և առաջ առաջնորդվել լեզվական նոր քաղաքականությամբ: Ահա այդ պատճառով և նպատակով է, որ «Բազմավէպը», ի տարբերություն ավելի վաղ հրատարակված Մխիթարյան միաբանության պարբերականների, որդեգրեց ոչ թե «ռամկախառն» աշխարհաբարը, այլ XIX դարի առաջին տասնամյակների արևմտահայ մտավորականության գործածած լեզուն, որը միայն նոր էր սկսել ձևավորվել որպես գրական լեզու և դեռ ճանապարհ ուներ անցնելու:

Առհասարակ հանդեսը վարում էր լեզվական ճկուն քաղաքականություն, գտնելով, որ որոշ նյութեր նախընտրելի է հրապարակել գրաբարով (հատկապես բանաստեղծական քերթվածքները): Լեզվական այսպիսի «երկկենցաղությունը» ընկալելի և հասկանալի էր ժամանակակիցների կողմից: Հանդեսի էջերում թարգմանական գրականության ընտիր էջեր էին ներկայացվում, հատկապես XIX դարակեսի ֆրանսիական գրականության հանճար Լամարթինի գործերը, որոնք այնքան մեծ ազդեցություն են գործել ժամանակի և հետագայի հայ բանաստեղծական մտքի փայլատակման վրա: Այս առումով տեղին է մեջբերել և դիտարկել հանդեսի անդրանիկ համարից հետևյալ իմաստավո-

րումը. «Մեր բանասէրներուն յաճոյական բան մը ընել ուզելով, աս օրագրիս մէջ երբեմն երբեմն ազգային մատենագրութենէն ի՛ զատ՝ կնայինք, որ հիմա-կուան օտար ազգաց մատենագրութեանը վրայ ալ խօսինք, ու մեր ատենի երևելի մատենագիրներուն գրուածներէն գէթ մանր ճաշակներ տանք՝ արձակ կամ ոտանաւոր թարգմանութեամբ: Այս անգամ հոս դրածնիս Լամարթինին գեղեցիկ ոտանաւորներէն մէկն է՝ ճիշդ թարգմանած»[2]:

Այնուհետև նշվում է, որ Լամարթինը այժմյան ողջ Եվրոպայի լավագույն ստեղծագործողն է, և իր գրվածքների երևելի հատկանիշներն են. «հաստա-տուն բարեպաշտութեան հոգի, փափուկ զգացմունք, բարակ մտածողութիւն, և վառվըռուն երևակայութիւն»[3]: Վերջում ասվում է, որ հաջորդ անգամներ «մէկալներուն ալ ճաշակը կուտանք»[4]: Ահա այսպես, սկսած անդրանիկ հա-մարից, «Բազմավէպը» քայլ առ քայլ, համար առ համար դաստիարակում և կրթում էր հայ ընթերցողների միտքն ու հոգին, գեղագիտական ընտիր ճա-շակ զարգացնում: Սկսած հատկապես առաջին խմբագիրներից, հանդեսի էջերում ձևավորվում, ամրապնդվում և հաստատակամ է դառնում ազգային ինքնության և հոգևոր հայրենիքի զգացողությունն ու հավատամքը: Հանդեսի առաջին տարին ամփոփելուց հետո, 1844 թվականի առաջին իսկ համարի առաջաբանում հետևյալ ուշագրավ դիտարկումն է. «Ուղիղ և գեղեցիկ դիտա-ւորութիւն, ամենայարմար միջոց, հաստատուն յոյս, անխոնջ աշխատութիւն, և ամենէն աւելի ճշմարիտ ազգասիրութիւն. ասոնք եղան «Բազմավէպին» առաջին տարուանը մէջ մեր առաջին քաջալերող եւ մխիթարող մտածութիւն-ները»[5]: Հիրավի նույնքան ազդեցիկ է սույնի շարունակությունը. «մարդու մը՝ իր ազգին լուսաւորութեանն ու յառաջդիմութեանը համար աշխատելէ աւելի գեղեցիկ ու վսեմ ի՞նչ դիտաւորութիւն կրնայ ըլլալ. Աս դիտաւորութեան հաս-նելու համար ուրիշ ի՞նչ յարմար միջոց կրնայ ըլլալ, բայց եթէ ընտանի եւ փո-փոխական ու զուարճալի ոճով մը ոչ միայն դիպիմաց բաները սորուեցնել չգիտցողին, հապա նաեւ բարակ եւ խորունկ գիտելիքները մանրացուցով կամ դիտակով ցուցընելու մը պէս՝ պարզել, մեկնել, ու ամէնուն հասկըցուելու բա-ներ ընել. բարոյական խրատները ծարաւի հոգւոց յստակ ջրի պէս խմցընել. մարդկային խելքին գիւտերն ու հնարքները իբրև հայլիի մը մէջ ցուցընել»[6]:

[2] «Բազմավէպ», 1843, թիվ 1, էջ 16:
[3] «Բազմավէպ», 1843, թիվ 1, էջ 16:
[4] «Բազմավէպ», 1843, թիվ 1, էջ 16:
[5] «Բազմապէպ», 1844, թիվ 2, էջ 3:
[6] «Բազմապէպ», 1844, թիվ 2, էջ 3:

Իր գոյության այս 175 տարիների ընթացքում «Բազմավէպը» հնարավորինս ամեն ինչով նպաստեց համայն հայության ազգային ինքնության ամրապնդմանն ու նրա հոգևոր էության հարստացմանը: Հայրենասիրության դասական ձևակերպումը, որն այնքան իմաստությամբ արել է հանդեսի մեծահռչակ խմբագիրներից Ղևոնդ Ալիշանը, շատ սերունդներ է կրթել ու տարել իր հետևից. «Ուր քաղաքացիք չիք՝ չկա և հայրենիք... բուն իսկ հայրենիք մեք եմք, անձն յուրաքանչիւր, և լաւութիւնք նեցուկք են նորա»[7]: Ալիշանյան կամ «Բազմավեպ»-յան հայրենասիրությունը սահմանում էր սույն կարգն ու օրենքը. «Ճանաչել և պահել անվթար զսեփական շնորհս ազգիս, զլեզու նորա, զպատմութիւն նորա, զսովորութիւն և զախորժակս նորա անվնաս, զիարազատ դպրութիւն նորա և զփառս անուան նորա: Զայսպիսի կամիմ հայրենասիրութիւն»[8]:

«Բազմավէպը» տասնամյակներ շարունակ մաքառեց իր լավագույն խմբագիրների և աշխատակից-հոդվածագիրների ջանքերով՝ ստեղծելու օտար տիրակալությունների ներքո բաժան-բաժան եղած ու անպաշտպան մնացած հայ ազգի ինքնապաշտպանության հոգևոր համակարգը, ձգտելով նախ և առաջ վերարթնացնել նրան որպես ժողովուրդ՝ ազատ ու անկախ ապրելու և հենց այդպիսի հայրենիք ունենալու նրա հիշողությունն ու բարոյակամային որակները:

Նախապես հաշվարկված ու մշակված գրական, գիտական ու մշակութային, լայնախոհ քաղաքականությամբ «Բազմավեպը» իր էջերը հյուրընկալորեն բացեց հայ իրականության տարբեր շերտերն ու բնագավառները ներկայացնող մտավորականների առջև, որոնք ոչ միայն չէին անդամակցում Մխիթարյան միաբանությանը, այլև երբեմն համակիր ու անդամ էին հակընդդեմ որևէ այլ կրոնական և հասարակական կազմակերպության: Ամսագրի էջերը XIX դարի կեսերին բացվեցին նաև ստեղծագործող կին անհատների առջև, որը բացառիկ մի երևույթ էր իր ժամանակի համար: 1861 թ. մարտին հանդեսի էջերում հրապարակվեց Սրբուհի Աստվածատուրյանի գրաբար երկարաշունչ մի բանաստեղծություն:

Տարեցտարի «Բազմավեպի» էջերում հրապարակվում էին հայաշխարհի տարբեր հատվածները ներկայացնող հեղինակների գործերը (ինչպես արևմտահայ, այնպես էլ արևելահայ, ինչպես պոլսահայ, այնպես էլ թիֆլիսահայ և

---

[7] «Բազմավէպ», 1845, թիվ 22, էջ 343:

[8] «Բազմավէպ», 1848, թիվ 12, էջ 181:

աշխարհի զանազան գաղթօջախներից): Դրանով իսկ հանդեսը տարածվում և հոգևոր-բարոյական առումներով արմատավորվում էր հայության բազմաբևեռ հատվածների շրջանում՝ դառնալով նրանց սեղանի հույժ սպասելի պարբերականը: Դա մեծապես ոգևորում էր ու նոր լիցքեր հաղորդում հանդեսի պատասխանատուներին, որոնք արդեն 1870-ական թթ. պատվախնդրությամբ ազդարարում էին, որ իրենց ամսագիրը Ս. Ղազար կղզուց տարածվում է մինչև Ասիայի, Եվրոպայի և Աֆրիկայի հայահոծ ու հայաշատ գաղթօջախներ՝ Կ. Պոլիս, Զմյուռնիա, Բաղդադ, Կահիրե, Կալկաթա, Լոնդոն, Փարիզ, Մոսկվա, Բաքու, Թիֆլիս և այլուր:

Ասել կուզի, որ «Բազմավէպը» մեկ կրոնական միաբանության օրգանից վերածվել էր ընդգծված ու շնչեղ համահայկական բնույթի և ուղղվածության հանդեսի:

Եվ ամենից կարևորն ու շեշտադրելին. «Բազմավէպը» տասնամյակներ շարունակ դարձել էր ոչ միայն հայ բազմաշերտ ընթերցողների հոգևոր սննդի մատակարարը, այլև մտավոր հասարակայնության հոգևոր, գիտական, բարոյական, մշակութային ոգորումները կազմակերպող, ընթացք և ուղղություն ցույց տվող ուժ կամ կենտրոն:

XX դարում «Բազմավէպը» շարունակում էր իր հայագիտական, և դրանով իսկ հայրենասիրական հատուկ ուղղվածությունն ու առաքելությունը՝ ասպարեզ տալով իր ժամանակի հայագիտական խոշոր դեմքերին: Հանդեսը կրկին հատուկ ուշադրություն էր դարձնում պատմաբանասիրական, աշխարհագրական և ժողովրդագրական թեմաներին: Այստեղ պետք է նշել, որ «Բազմավէպը» առհասարակ քիչ է շոշափել քաղաքական թեմաները, քիչ է անդրադարձել իրականության մեջ առկա սոցիալ-քաղաքական սուր խնդիրներին, որը առիթ է տվել ծայրահեղ մտայնության տեր որոշ գործիչների այն որակել որպես «էկլետիկ», այսինքն՝ բոլոր սկզբունքները խառնիխուռն միավորող և հասարակական երևույթներին իբր ոչ առաջադեմ դիրքերից մոտեցող պարբերականի: Մինչդեռ «Բազմավէպը» շարունակում էր հավատարիմ մնալ իր ուղեգծին, և դրանում էր նրա անքեկանելի մեծությունը, առաջատարությունն ու սկզբունքայնությունը՝ ծառայել միայն ու միայն հայագիտությանը՝ առանց որևէ քաղաքական համոզմունքի, համակրանքների կամ հակակրանքների: Փոխարենը այս շրջանի «Բազմավէպին» հատուկ է հայերի մշակութային, հոգևոր-բարոյական կողմնորոշումներին նրբորեն արձագանքելը, Սփյուռքի և Հայաստանի կենտրոններում հայկական հինավուրց քաղաքակրթության ավանդների ու ժառանգության պաշտպանությունը, մշակութային

տեղաշարժերի արտացոլումը մեր մտավոր կյանքի ոլորտներում մի կարևոր նպատակադրումով՝ նպաստել հայոց հոգևոր միասնությանն ու ներդաշնակությանը՝ հայագիտության անդաստանում և հայագիտության միջոցով:

«Բազմավէպը» վերոնշյալ ժամանակաշրջանում տպագրել է հայրենիքի և Սփյուռքի բազմաթիվ հայագետների, ինչպես նաև օտարազգի ճանաչված հայագետ գիտնականների:

Հայաստանում խորհրդային իշխանության տարիներին «Բազմավէպը» թեև որոշ հասկանալի սահմանափակումներով, այնուամենայնիվ, միշտ պահպանել է կապը հայրենիքի հետ և շարունակել իր էջերը ծառայեցնել հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդմանը՝ ընդհանուր ազգային-հայագիտական հենքի և ուղղվածության վրա:

Վերջին շրջանում, այնուամենայնիվ, հանդեսը հավանաբար աշխարհաքաղաքական կտրուկ փոփոխությունների բերումով ստիպված է արտահայտել իր որոշակի վերաբերմունքը վերոնշյալ քաղաքական իրողությունների և զարգացումների վերաբերյալ՝ այդ նպատակով ընտրելով հատուկ ժանր, կամ ավելի շուտ, հին ժանրի նորովի օգտագործումը, որը կոչվում է խմբագրական: Զուսպ և համառոտ, բայց և շատ արտահայտիչ այդ խմբագրականներում խտացված շատ բան է ասվում, թեև բացառապես բարոյախոսական շրջանակներում: Այսպես, խմբագրականներ են տպագրվել գլոբալիզացիայի, գենդերային ծայրահեղությունների, հասարակության մեջ մտավոր բևեռացումների, անհանդուրժողականության և իր իսկ բնութագրումով՝ «ամէն ինչ ամէն բանի դէմ և ամէն ոք ամէն ինչի դէմ» իրողությունների կամ սկզբունքների դատափետմանը, որոնք «Բազմավեպի» խորին համոզումով՝ «մեր արդիական ոտխն են»[9]:

Վերջին շրջանում՝ ավելացվել են նոր խորագրեր բնութագրեր և ուսումնասիրություններ, հաղորդումներ, նշումներ, վիճարկումներ:

2012–2017 թթ. հանդեսը տպագրվում է տարեկան երեք կամ չորս անգամ, ընդ որում հաճախ միացյալ թվահամարներով, որը ինչ-որ տեղ մատնում է նյութականի զգացնել տվող կարիքը հրատարակիչների մոտ:

Այդ առումով տեղին է հիշեցնել ՀՀ նոր իշխանություններին, որ կարելի և պետք է հատուկ ուշադրություն դարձնել հայկական հնագույն սույն հանդեսի նյութական կողմի ամրապնդմանը:

---

[9] «Բազմավէպ», 2013, թիվ 1–2, էջ 9:

Հայ ամենաերկարակյաց հանդեսին ցանկանում և մաղթում ենք երկար ու հարատև երթ, այնքան երկար ու հարատև, որքան երկար հարատևելու է հայագիտությունը՝ իր անբաժան ու մշտական ուղեկցի՝ «Բազմավէպի» հետ:

Եզրակացություն

«Բազմավէպ» հանդեսը այսօր հանդիսանում է բազմադարյան հայ լրագրության արժանավոր նախապետը: Այն ամենատարեցն է Իտալիայում լույս տեսնող պարբերականների մեջ և չորրորդը՝ աշխարհի հնագույն հանդեսների շարքում: Հանդեսի 150-ից ավելի տարեհատորները հայ մշակույթի և գրականության մնայուն էջերից են, որտեղ «ամփոփված են գիտնականների շատ սերունդների հայագիտական հունձքն ու վաստակը: Առանձնահատուկ են հատկապես «Բացառիկ»-ները՝ նվիրված հայ և համաշխարհային մշակույթի, պատմության նշանակալի իրադարձություններին և ականավոր անհատների հոբելյաններին[10]: Պետք է նշել, որ մեծապես «անգնահատելի են հանդեսի ծառայությունները եվրոպական միտքն ու գաղափարները հայոց կյանք ներբերելու ասպարեզում: Մյուս կողմից՝ «Բազմավէպում» օտար լեզուներով տպագրված հայագիտական հոդվածները եվրոպացիներին ծանոթացնում են մեր ազգի անցյալն ու նրա մշակույթը: Հանդեսին աշխատակցել և իրենց գործուն նպաստն են բերել Ղ. Ալիշանը, Է. Հյուրմյուզյանը, Գ. Զարբհանալյանը, Վ. Հացունին, Ա. Ղազիկյանը, Է. Տիլան, Բ. Սարգիսյանը, Ֆեդերիկ Ֆեյդին, Ե. Փեչիկյանը, Կ. Քիպարյանը, Ջ. Ֆրասսոնը, Ն. Տեր-Ներսիսյանը, Ս. Ճեմճեմյանը, Լևոն Զեքիյանը և ուրիշներ[11]:

Հանդեսի մանկավարժական և բարոյախոսական հիմնահարցերը ուսումնասիրող հայ հետազոտողը իրավացիորեն կատարում է սույն դիտարկումը. «Սակայն աչքի է զարնում մի նպատակ. «Բազմավէպը» կրթելու է հայ հասարակությանը»[12]:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Դոլուխանյան Ռ. 2015, Մանկավարժական և բարոյախոսական դասերը. «Բազմավեպ», Երևան, էջ 18:

Հայ սփյուռք հանրագիտարան 2003, Երևան, 732 էջ:

Քիրստոնյա Հայաստան հանրագիտարան 2002, Երևան, 1076 էջ:

[10] Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան 2002, 168:

[11] Հայ Սփյուռք հանրագիտարան 2003, 233:

[12] **Դոլուխանյան Ռ**. 2015, 18:

«Բազմավեպ», 1843, թիվ 1, էջ 16, 1841, թիվ 2, էջ 3, 1845, թիվ 22, էջ 343, 1848, թիվ 12, էջ 181, 2013, թիվ 1–2, էջ 9:

«БАЗМАВЕП» – СТАРЕЙШИЙ АРМЯНСКИЙ ЖУРНАЛ

КАРАПЕТЯН А.

Резюме

Ключевые слова: монастырь Святого Лазаря, Габриэл Айвазовский, Гевонд Алишан, редакторы «Базмавепа», конгрегация мхитаристов, публикация мхитаристов, духовная родина.

Одним из важнейших периодических изданий Конгрегации мхитаристов был журнал «Базмавеп», первый номер которого вышел в 1843 г. в Венеции. Примечательно, что «Базмавеп» издается по сей день. Редакторы журнала – Габриэл Айвазовский, Гевонд Алишан, Огсентиос Гургенян, Григор Джелалян и др. были образованными и передовыми людьми своей эпохи. Журнал способствовал укреплению чувства национального самосознания, став рупором научных, нравственных и культурных устремлений армянской интеллигенции.

"BAZMAVEP" – AN ANCIENT ARMENIAN JOURNAL

KARAPETYAN A.

Summary

Key words: Lazarus Monastery, Gabriel Aivazovsky, Alishan Ghevont, Editos of "Bazmavep", Mekhitarist Congregation, Mekhitarist publications, spiritual homeland.

One of the most significant periodicals of the Mekhitarist Congregation was the journal "Bazmavep". The first issue of the journal was published in 1843, in Venice. It is noteworthy that the journal is still being published. The editors of the journal Gabriel Ayvasovski, Ghevond Alishan, Ogsentios Gurgenian, Grigor Chelalian were the educated frontrunners of the epoch. Becoming the mouthpiece of the Armenian intelligentsia, the journal contributed to the strengthening of national consciousness.

ՄԱՐԻԱՄ ՀՈՎՍԵՓՅԱՆ*
Բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
mariamhovsepian@mail.ru

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ «ՃԱԿԱՏԱՄԱՐՏ» ՕՐԱԹԵՐԹԻ ԷՋԵՐՈՒՄ

Բանալի բառեր՝ պատերազմ, Հայաստանի Առաջին հանրապետություն, Վրաստան, սահման, բանակցություն, կոնֆլիկտ, կամավորներ:

Ներածություն

Հայաստանի Առաջին հանրապետությունը հարևան պետությունների հետ հարաբերություններում ձգտում էր խաղաղության և համագործակցության, ինչը, սակայն, չէր խանգարում անհրաժեշտության դեպքում դիմել ոչ միայն ինքնապաշտպանության, այլև, նախահարձակ լինել ու զենքի օգնությամբ լուծել իր սահմաններին առնչվող և դիվանագիտական ճանապարհով անլուծելի համարվող խնդիրները, անգամ՝ հաղթել իրեն պարտադրված պատերազմում: Խոսքը մասնավորապես վերաբերում է հայ-վրացական սահմանային վեճերին, որոնք Հայաստանի և հայ ժողովրդի հանդեպ վրացական իշխանությունների վարած թշնամական, թալանչիական և զավթողական քաղաքականության հետևանքով ի վերջո 1918 թ. վերջին հանգեցրին վրաց-հայկական պատերազմին[1]: Վրացական կողմի նկրտումների և պատմա-աշխարհագրական փաստերն ու իրողություններն հօգուտ իրենց խեղաթյուրելու պատճառով ավելի քան 21 օր տևած այդ պատերազմը, սակայն, այդպես էլ վերջ չդրեց եղած հակասություններին և չլուծեց առաջացած հիմնախնդիրները, որոնք հետագայում ավելի խորացան՝ հասնելով մինչև մեր օրերը:

«Ճակատամարտի» անդրադարձը Հայ-վրացական պատերազմին

Արխիվային սակավաթիվ փաստաթղթերը վկայում են հայ-վրացական թնջուկը դիվանագիտական, ոչ ռազմական, խաղաղ բանակցությունների մի-

* *Հոդվածը ներկայացվել է 24.12.19, գրախոսվել է 02.03.20, ընդունվել է տպագրության 04.12.20:*

[1] Հայոց պատմություն 2010, 116–120:

ջոցով լուծելու ճանապարհով Հայաստանի իշխանությունների գործադրած ջանքերի մասին[2]: Օրինակ՝ դեռևս 1918 թ. նոյեմբերի 8-ին Հայաստանի խորհուրդը (խորհրդարանը) իր ընդունած բանաձևում առաջարկում էր կառավարությանը «հայ-վրացական խնդիրը խաղաղ ճանապարհով վերջացնելու համար բանակցություններ սկսել վրաց կառավարության հետ, կոնֆերանս գումարելու՝ սահմանների որոշման համար»[3]: Նույն թվականի դեկտեմբերի 5-ին, առանց նախապես ռազմական գործողությունն սկսելու որոշման մասին տեղեկացնելու, Ախալքալաքի գավառը գրավելուց հետո, Վրաստանի արտաքին գործերի նախարար Եվգենի Գեգեչկորին հեռագիր էր ուղարկել Հայաստանի կառավարությանը՝ վերջինիս կազմեցնելով կատարված փաստի առջև[4]: Ընդ որում, նա բացահայտ քամահրանքով և տողատակի ծաղրով ասում էր, թե հայկական այդ տարածքի գրավումը թելադրված էր տեղի հայ բնակչության՝ իբրև թե թուրքական վտանգից իրենց փրկելու խնդրանքով[5]: Բացի այդ՝ Գեգեչկորին, կրկին տողատակի ծաղրով, ավելացնում էր, որ կատարվածը որևէ կերպ չէր խանգարելու սահմանային հարցերը կարգավորելու նպատակով հայ-վրացական՝ արդեն սկսված բանակցությունների խաղաղ ընթացքին, որոնք պետք է ավարտվեին երկկողմանի փոխշահավետ պայմանավորվածություններով[6]: Ընդամենը մի քանի օրից վրացական զինուժը գրավում է նաև Բորչալուի գավառի (ներկայիս՝ Լոռու մարզի) հարավային հատվածը՝ նորից Գեգեչկորիի կողմից ուղարկված հեռագրով հայկական կողմից պահանջելով մեկընդմիշտ հրաժարվել այդ գրավյալ տարածքներից և ընդունել դրանց պատմականորեն «վրացական» ծագումը[7]: Բնականաբար, հայկական կողմն իր հերթին տեղյակ էր պահում պատասխան մարտական գործողությունների և վրացական զորքի ալան-թալանից, բռնարարքներից, ջարդարարությունից հայ ազգաբնակչությանը պաշտպանելու սեփական դիրքորոշման մասին[8]:

Քանի որ Հայ-վրացական պատերազմի մասին մինչ այժմ գրվել են մի շարք ուսումնասիրություններ, գիտական մենագրություններ, ուստի մեր նպատակն ամենևին էլ դրանցում վերհանված հարցադրումներին անդրադառ-

---

[2] **Վրացյան** 1993, 41:

[3] Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. 2000, 69:

[4] Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. 2000, 77:

[5] Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. 2000, 77:

[6] Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. 2000, 77:

[7] Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. 2000, 78–79:

[8] Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. 2000, 78–79:

նալը չէ: Պարզապես պետք է ևս մեկ անգամ փաստենք, որ այդ պատերազմը սանձազերծվել էր Վրաստանի իշխանությունների կողմից, որոնք մի կողմից՝ կոնֆլիկտը լուծելու համար խոսում էին խաղաղ բանակցությունների անհրաժեշտության մասին, մյուս կողմից՝ ռազմական գործողությունների և եվրոպական հզոր պետությունների ու Թուրքիայի հետ անդրկուլիսյան պայմանավորվածությունների շնորհիվ իրենց երկրին էին բռնակցում տարածաշրջանում գրեթե մեկուսացման մեջ հայտնված Հայաստանի Առաջին Հանրապետության տարածքների զգալի մասը:

Վրաց-հայկական հակամարտության կողմերից առաջինը թեև կարողացավ յուրացնել մեր պատմական հայրենիքի մի հատվածը, բայց երկրորդ կողմն, իր ռազմական ու դիվանագիտական հնարավորությունների շրջանակներում, մինչև վերջ պայքարեց Մայր հայրենիքը մասնատումից փրկելու և ամբողջական դարձնելու համար: Այդ պայքարն այսօր իր արտահայտությունն է ստանում հայոց պահանջատիրության դրույթներում և այդ ուղղությամբ տարվող աշխատանքներում: Մի օր հայ ժողովուրդը վերականգնելու է իրենից բռնի ուժով ժամանակին խլված հայրենի եզերքների նկատմամբ ունեցած պատմական իրավունքները: Այդ գործընթացում իրենց ուրույն դերն ունեն զանգվածային լրատվամիջոցները, ի թիվս որոնց՝ տպագիր, էլեկտրոնային և օնլայն պարբերականները: Այս առումով հայոց պայքարի ակունքներում է կանգնած «Ճակատամարտ» օրաթերթը, որը ժամանակին աչալրջորեն հետևում էր տվյալ դեպքում հայ-վրացական հակամարտությանը՝ ընթերցողների համար ապահովելով թեմայի վերաբերյալ անսպառ լրատվություն:

«Ճակատամարտն» օբյեկտիվորեն և անաչառ կերպով է լուսաբանել հայ-վրացական պատերազմը՝ դրա սկսվելու առաջին իսկ օրերից: Ներկայացրել է այդ հիմնախնդրի նախապատմությունը, դրդապատճառները, պատմական ակնարկի և փաստերի հիման վրա արել է վերլուծություններ, հանդես է եկել հարցի կարգավորման առաջարկներով՝ լուրի, հոդվածի, հարցազրույցի միջոցով:

1919 թվականի հունվարի 27-ին թերթում տպագրված «Հայ-վրացական միջադեպը և պատճառները» վերնագրով ծավալուն վերլուծական երկմասանի հոդվածն է հատկապես հիշարժան՝ պատճառները վերհանելու առումով[9]: Հոդվածագիր Ամատունին այդ պատմական իրադարձությունը բնորոշում էր

[9] «Ճակատամարտ» 1919, N 63 (Հայ-վրացական միջադեպը և պատճառները):

որպես հայ-վրացական միջադեպ, «որ յանգեցաւ զինուած ընդհարման երկու դարաւոր բախտակից ու բարեկամ ժողովուրդներու միջեւ»[10]: Նրա կարծիքով՝ հայ-վրացական փոխհարաբերությունների բարդությունն սկսվել էր դեռևս Կովկասյան ճակատի քայքայման շրջանից, երբ ռուսական զինուժի հեռանալուց հետո վրացական կողմը խախտել էր հայ Ազգային խորհրդին տված այն խոստումը, թե հայերին մենակ չէին թողնելու թուրքական հարձակման դեպքում[11]: Դրանից բացի՝ վրացիները, համագործակցելով Վրաստան հասած գերմանական զորքերի հրամանատարության հետ, «գերմանական սուիններով հայերու կռնակէն կը գրաւէին անոնց հողամասերը, Վրաստանի անկախութեան ամրապնդման և ապագայ ապահովութեան համար»[12]: Հիշատակելով մի շարք այլ փաստեր՝ Ամատունին գրում էր. «Բազմաթիւ նմանօրինակ բացասական երեւոյթներ հայ ժողովուրդը բերին այն եզրակացութեան, որ վրացի ժողովուրդը հայ ժողովուրդի կործանման գնով կ'ուզէ փրկել իր ֆիզիքական գոյութիւնը և այդ ճանապարհին վրայ ամեն տեսակ չարագործութիւններու ընդունակ է»[13]: Այս տեսակետը, մի կողմից, լի է զգացմունքային շեշտադրումով, մյուս կողմից, հոդվածագրի բերած փաստերը բավական համոզիչ են և անկողմնակալ: Հիշատակենք հոդվածաշարում մեջբերված այդպիսի փաստերից մի քանիսը: Ասենք՝ պատերազմական ամենաթեժ շրջանում, երբ հայկական բանակի ղեկավարությունը հայ ժողովրդի համար նախատեսված պարենի պաշարն ի պահ էր տվել վրացիներին, նրանք յուրացրել էին այն՝ Վրաստանի սահմաններում կենտրոնացած բազմահազար հայ տարագիրների մատնելով փաստացի սովամահության կամ խոտակերության[14]: Հոդվածագիրը նշում էր, որ անկախացած Վրաստանն, ավելորդ բեռ համարելով հայ գաղթականներին, փորձում էր նրանց դուրս հանել իր տարածքներից[15]: «Ատրպատականէն հասած գաղթականութիւնը սուիններով քշեցին Նուրի փաշայի բանակին առջև, և թշուառ փախստականները անխնայ կոտորուեցան: Ախալքալաքի գաղթականութիւնը կեդրոնացուցին Բախուրիանիի և Հալկայի բարձունքները: Ծոյլ չտուին որոշուած սահմաններէն դուրս ելլել, այն ալ բացօթեայ և անպատսպար: Այս փախստականութիւնը մինչև դեկտեմբեր

---

[10] «Ճակատամարտ» 1919, N 63:
[11] «Ճակատամարտ» 1919, N 63:
[12] «Ճակատամարտ» 1919, N 63:
[13] «Ճակատամարտ» 1919, N 63:
[14] «Ճակատամարտ» 1919, N 67 (Հայ-վրացական միջադեպը և պատճառները):
[15] «Ճակատամարտ» 1919, N 67:

ամիսը մնաց սարերու գլխին՝ ձիւնին և բուքին մէջ: Վերադարձի ժամանակ արդէն հարիւրին 50 կոտորուած էին»[16],- գրում էր Ամատունին: Նա նաև հիշատակում էր մեկ այլ փաստ: Երբ Ղարաքիլիսայի ճակատամարտի ժամանակ գաղթականները վերահաս կորստից փրկվելու նպատակով փորձում էին ապաստան գտնել Վրաստանի տարածքներում, այդ երկրի ներքին գործերի նախարարը հեռագրով կարգադրում էր նրանց չթողնել անցնել Սանահինի կայարանից դեպի իրենց տիրույթները: Իսկ երբ Հայաստանի կառավարությունը Թիֆլիսից տեղափոխվեց Հայաստան և գաղթականների պարենավորման համար Ռուսաստանից գնված ապրանքները Վրաստանի երկաթուղով անցկացնելու թույտվության համար դիմեց վրացական իշխանություններին, նրանք մերժեցին. «Մինչեւ հիմա (1919 թ. հունվարի 27 – ***Մ.Հ.***) գնուած բոլոր պաշարները կը մնան Ռուսաստան»[17]: Կարելի է փաստել, որ իր հոդվածաշարում բերած փաստերի հիման վրա Ամատունին ամբողջական պատկերացում է տվել Հայ-վրացական պատերազմի մասին:

1918 թ. դեկտեմբերի 29-ի համարում «Մեր խոսքը» խորագրի ներքո «Բախտալից ազգեր՝ դեմ դիմաց» վերնագրով խմբագրականում նշվում էր, որ երկու նորազատ հարևան երկրներ կռվի էին բռնվել, և Կուրի ափերից, համերաշխության ու սերտ համագործակցության մասին լուրի փոխարեն, սկսված ճակատամարտից բարձրացող շաչյունի ձայնն էր լսվում[18]: Թերթը գրում էր, որ Հայաստանի և Վրաստանի միջև առկա հողային ու այլ կարգի վեճերը լուծելիս Վրաստանը որդեգրել էր ամբարտավանությամբ աչքի ընկնող կեցվածք և «չկամ դիրք մը»[19]: Ամեն անգամ, երբ Հայաստանի կառավարությունը փորձել էր վեճերը կարգավորել փոխըմբռնման մթնոլորտում, «աշխարհագրական և ցեղագրական տուիքներուն հիման վրայ», վրացական կողմը «պատ քաշած է՝ ցոյց տալով նուաճողական, սուր և գրգռիչ ախորժակ մը»[20]: Նրանք ոչ միայն հալածել էին տեղաբնակ և ցեղասպանությունից հետո Վրաստանում ապաստանած հայ ազգաբնակչությանը, այլև իրենց ձեռքն էին երկարել «իսկապէս հայկական ժառանգութիւններու վրայ, որպիսին է օրինակ՝ Սանահին»[21]: Վրաց կառավարությունը առաջարկել էր Թիֆլիսում ապրող հայերին

---

[16] «Ճակատամարտ» 1919, N 67:

[17] «Ճակատամարտ» 1919, N 67:

[18] «Ճակատամարտ» 1918, N 35 (Բախտակից ազգեր՝ դեմ դիմաց):

[19] «Ճակատամարտ» 1918, N 35:

[20] «Ճակատամարտ» 1918, N 35:

[21] «Ճակատամարտ» 1918, N 35:

մեկընդմիշտ հեռանալ՝ այնտեղ թողնելով իրենց սեփականությունը և ունեցվածքը, որոնց փոխարժեքը խոստացել էր վերադարձնել 24 տարվա ընթացքում: Հայերը մերժել էին՝ նույնը առաջարկելով վրացիներին, բայց՝ 24 ժամվա ընթացքում[22]: «Ճակատամարտն» անիմաստ և անտեղի էր համարում վրացական իշխանությունների ճիգերը՝ «սահմաններն ու երկրամասերը գծելու՝ համաձայն իրենց ախորժակներուն»: Պարբերականը գրում էր հետևյալը. «Զէնքի ու՛ժն է, որ պիտի վճռէ շարք մը անլոյծ հարցեր: Մենք կ'ուզենք հաւատալ, թէ երկար չպիտի տեւէ այս կռիւը, և մեր ջղագրգիռ հարեւանները շուտով պիտի թօթափեն իրենց սնամէջ ու վտանգաւոր յաւակնութիւնները»[23]: Անդրադառնալով պատերազմի պատճառներին՝ թերթը փաստում էր, որ վրացական կողմն էր պատերազմի հրձիգը[24]: Հայերը մարտերում հաղթանակ էին գրանցել՝ վրացիներին դուրս հանելով Լոռու գավառից[25]: Թերթի հրապարակումների համաձայն, ի պատասխան այդ ամենի, Վրաստանի կառավարությունը խուզարկություններ էր նախաձեռնել Հայաստանի մի շարք նախարարների ու պատգամավորների՝ Թիֆլիսում գտնվող բնակարաններում, ՀՅԴ Թիֆլիսի կենտրոնական գրասենյակում, «Հորիզոն» թերթի խմբագրատանը՝ արգելելով դրա հրատարակումն «իր վտանգաւոր ուղղութեան և Վրաստանի կառավարութեան հանդէպ իր բռնած թշնամական դիրքին հետեւանքով»[26]:

«Ճակատամարտը» խմբագրականներից մեկում ուրախությամբ արձանագրում էր, որ այս պատերազմում զենքը բռնեց իրավունքի կողմը, իսկ այս անգամ «իրաւունքը Հայաստանինն էր»[27]: Գրում էր, որ պատերազմի խնդրո առարկա դարձած Ախալքալաքն ու Լոռին երկու գերազանցապես հայաբնակ շրջաններ էին, որոնցից առաջինում հայերն իշխող թիվ էին կազմում տեղի ազգաբնակչության մեջ, իսկ երկրորդում չկար գեթ 1 վրացաբնակ ավան[28]: «Պատերազմը, որուն ձեռնարկեց Վրաստան, հայուն չտալու համար էր այդ 2 շրջանները, զանոնք կորզելու համար էր հայութեան սրտէն: Ան ուզեց զէնքի

[22] «Ճակատամարտ» 1918, N 35:
[23] «Ճակատամարտ» 1918, N 35:
[24] «Ճակատամարտ» 1918, N 35 (Հայկական առաջին հաղթանակները):
[25] «Ճակատամարտ» 1918, N 35:
[26] «Ճակատամարտ» 1918, N 35 (Հայերը կհալածվին Թիֆլիսի մեջ):
[27] «Ճակատամարտ» 1919, N 40 (Ախալքալաքն ու Լոռին մեր Ալզաս-Լոռեննն են):
[28] «Ճակատամարտ» 1919, N 40:

ուժով գրաւել ինչ որ պատմութիւնն ու իրաւունքը կը խլէին իրմէ»[29],- կարդում ենք թերթում:

Թերթում զետեղված էր 1918 թվականի դեկտեմբերի 12-ով թվագրված՝ Հայաստանի Առաջին հանրապետության վերջնագրի պատճենը՝ ուղղված Վրաստանի կառավարությանը[30]: Ստորև այն մեջբերում ենք ամբողջությամբ՝ ելնելով հիշյալ փաստաթղթի պատմական կարևոր արժեքից:

«Մեծ Ղարաքիլիսա, 12 դեկտ.

Քաղաքացիական և զինուորական պետ Դրօին:

Վրաց զօրքերի գործողութիւնները Բօրչալուի գաւառի հայկական մասում, որ բռնութեամբ գրաւել է Վրաստանը, ստեղծել են այդ շրջանում մի դրութիւն, որն այլեւս հանդուրժելի լինել չի կարող: Այդ շրջանից վրաց զօրքերի անյապաղ հեռացումը միայն կարող է առաջն առնել յետագայ արիւնհեղութեան և հաստատուն բարեկամական յարաբերութիւններ սահմանել Հայաստանի և Վրաստանի միջեւ: Այս նկատմամբ Հայաստանի կառավարութիւնը պատիւ ունի առաջարկել Վրաստանի կառավարութեանը՝ դուրս հանելու, առանց ո և է յապաղման, վրաց զօրքերը Բօրչալուի գաւառի հայկական մասից: Ձեր մերժման կամ յապաղման դէպքում Հայաստանի կառավարութիւնը ստիպւած կը լինի անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել՝ պաշտպանելու համար Հայաստանի սահմանները վրաց զօրքերի բռնութիւններից և անկարգութիւններից:

Մինիստր նախագահ՝ Քաջազնունի

Յ. Գ. – Նկատի ունենալով, որ վստահութիւն չկայ, թէ հեռագիրը կը հասնի ըստ պատկանելոյն, յանձնեցէք այս հեռագիրը վրաց հրամանատարութեանը՝ Թիֆլիս ուղարկելու համար:

Գեներալ Սիլիկեան»[31]:

Հայ-վրացական պատերազմի հաշտության բանակցությունների և երկկողմանի փոխհարաբերությունների լուսաբանումը «Ճակատամարտ» օրաթերթի էջերում

1919 թ. հունվարի 3-ին պարբերականը տեղեկացնում էր, որ Հայ-վրացական պատերազմն ավարտվել էր հայոց բանակի հաղթանակով[32]: Թերթը

[29] «Ճակատամարտ» 1919, N 40:

[30] «Ճակատամարտ» 1919, N 55 (Հայկ. Հանրապետության վերջնագիրը Վրաստանին):

[31] «Ճակատամարտ» 1919, N 55:

[32] «Ճակատամարտ» 1919, N 55 (Հայ և վրացական պատերազմը վերջացած):

ներկայացնում էր պատերազմին երկու կողմերի մասնակցության, կորուստների և ձեռքբերումների վերաբերյալ թվային տվյալներ: Ըստ այդմ՝ հայկական զորքի զինվորների թվաքանակը հասնում էր 3500-4000-ի, իսկ վրացականինն անցնում էր 10.000-ը[33]: Պատերազմող կողմերը կրել էին հետևյալ կորուստները.

	«Հայաստան	Վրաստան
գերի	170	1200
թնդանօթ	2	18
գնդացիր	3	24
սպանուած և կորած	550	1150
զրահպատ կառխումբ	-	3
շոգեշարժներ	-	19
երկաթուղիի վակոններ		320»[34]:

Հայ-վրացական վեճը հարթելու նպատակով կազմված հանձնաժողովի գործունեության մասին թերթում կան հրապարակումներ: Դրանց համաձայն՝ այդ մարմինն ունեցել էր չորս նիստ[35]: Հաշտության բանակցություններից նույնպես անմասն չէր մնացել «Ճակատամարտը»: Վրաստանը թեև պարտություն էր կրել 21-օրյա պատերազմում, բայց առաջ էր քաշել իր պահանջները: Դրանց մեջ առաջնայինն այն էր, որ այդ պետությունն իրենն էր համարում Ախալքալաքի և Բորչալուի գավառները[36], ինչի մասին տեղեկացրել էր Հայաստանի արտաքին գործերի նախարարությանը[37]: Իր հերթին Հայաստանի խորհրդարանը միաձայն այն կարծիքն էր հայտնել, թե հիշյալ գավառները մտնում էին Հայաստանի սահմանների մեջ[38]:

«Ճակատամարտն» անդրադարձել էր Հայաստանի և Վրաստանի միջև հարաբերությունների վերահաստատման գործընթացին: Թղթակցություններից մեկում փաստվում էր, որ 2 կողմերի միջև երկաթուղիների կանոնավոր երթևեկությունը վերսկսվել էր 1919 թվականի հունվարի 31-ից[39]: Մինչ այդ՝

---

[33] «Ճակատամարտ» 1919, N 80 (Քսանմեկ օրվան պատերազմի մը պատմությունը. ո՞վ իրավունք ուներ, ո՞վ հաղթեց):

[34] «Ճակատամարտ» 1919, N 80:

[35] «Ճակատամարտ» 1919, N 75 (Հայ-վրացիական խորհրդաժողովը):

[36] **Խատիսեան** 1968, 114:

[37] «Ճակատամարտ» 1919, N 41 (Հայ-վրացիական վեճը):

[38] «Ճակատամարտ» 1919, N 41:

[39] «Ճակատամարտ» 1919, N 74 (Հայաստանի և Վրաստանի համաձայնությունը. բոլոր վեճերը՝ հարթված, կանոնավոր հարաբերություն):

հունվարի 23-ին փոխանակվել էին բոլոր գերիները, իսկ հունվարի 26-ին ազատ էին արձակվել բանտարկյալները[40]: «2 կողմերու միջեւ կնքուած համաձայնագրերու պատճէնները հրատարակուեցան յունվար 31ի թերթերուն մէջ, որմէ յետոյ սկսան բարեկամական յարաբերութիւններ Հայաստանի և Վրաստանի միջեւ: Հայաստանի խորհրդարանի նախագահ պ. Աւետիս Սահակեան, ընկերակցութեամբ արդարադատութեան նախարար պ. Սամսոն Յարութիւնեանի և պարենաւորման նախարար պ. Եւանգուլեանի, Թիֆլիս հասան յունվար 31ին»[41],- կարդում ենք թերթում:

Վրացական իշխանություններն իրենց համար անհաջող ավարտ ունեցած պատերազմից հետո բռնությունների քաղաքականություն էին սկսել վարել վրացահայության հանդեպ: «Թիֆլիսի ու ամբողջ Վրաստանի մէջ սարսափի ռէժիմն է, որ կը տիրէ հայերուն հանդէպ…Հայ մտաւորականութեան ծաղիկը զնտաններու մէջ նետուած, հայ գործիչները շղթայակապ, հայ երիտասարդութենէն հազարաւորներ հեռաւոր աքսորի ճամբան, հայ հարուստները՝ թալանուած…Վրաստան կարծես աւելի մոլեգնած ու աւելի նենգ՝ կը ճզնի հայուն բարոյական ու տնտեսական ուժը քայքայել»[42],- գրում էր թերթը: Այդ հալածանքներն ամփոփված էին մասնավորապես Թիֆլիսից ստացված տեղեկությունների հիման վրա գրված «Ձերբակալությունները Թիֆլիսի մեջ» նյութում[43]: Այդտեղից ներկայացնենք մի քանի փաստ: Ըստ այդմ՝ ձերբակալվել էին Վրաստանի մայրաքաղաքում լույս տեսնող հայկական «Հորիզոն», «Աշխատավոր», «Ժողովրդի ձայն» թերթերի աշխատակիցները, և առգրավվել էր այդ պարբերականների թղթի ողջ պաշարը[44]: Հրատարակվում էր միայն «Մշակ» լրագիրը[45]: Գորիում ձերբակալել էին Վրաստանի խորհրդի անդամ Ջորի Ջորյանին և, իբր, սխալմամբ, նաև՝ այդ երկրում Հայաստանի դեսպան Արշակ Ջամալյանին[46]: Վրաստանի կառավարությունը Համաձայնական ուժերի ներկայացուցչությանն էր տրամադրել Թիֆլիսում գտնվող վիրահայերի Ազգային խորհրդի շենքը[47]:

---

[40] «Ճակատամարտ» 1919, N 74:
[41] «Ճակատամարտ» 1919, N 74:
[42] «Ճակատամարտ» 1919, N 55 (Գերագույն ատյանին առջև):
[43] «Ճակատամարտ» 1919, N 57 (Ձերբակալությունները Թիֆլիսի մեջ):
[44] «Ճակատամարտ» 1919, N 57:
[45] «Ճակատամարտ» 1919, N 57:
[46] «Ճակատամարտ» 1919, N 57:
[47] «Ճակատամարտ» 1919, N 57:

1919 թ. հունվարի 23-ին թերթը լուր էր տպագրել այն մասին, որ, ի տրիտուր այդ հետապնդումների և բռնարարքների, Վրաստանի հայերը չէին ընկրկել և շարունակել էին պայքարել սեփական իրավունքների համար[48]: Վիրահայ Ազգային խորհրդի պատգամավորությունը հանդիպել և Վրաստանի կառավարության նախագահ Նոյ Ժորդանիայի հետ քննարկել էր բռնագրավումներին և ձերբակալություններին առնչվող դեպքերը: Ժորդանիան կարգադրել էր այլևս չխոչընդոտել Վիրահայ Ազգային խորհրդի Գործադիր մարմնի, ինչպես նաև հայ գաղթականների խնդիրներով զբաղվող բոլոր հիմնարկությունների, որբանոցների, հիվանդանոցների գործունեությանը՝ վերադարձնելով Վիրահայ Ազգային խորհրդից առգրավված բոլոր գումարները[49]:

«Ճակատամարտը» գրում էր, որ վրացական կողմն, առիթը եկած տեղը, խեղաթյուրում էր Հայ-վրացական պատերազմի պատճառները՝ դրա հրահրման մեղքը բարդելով Հայաստանի իշխանությունների վրա: Օրինակ՝ թերթում թարգմանաբար տպագրված էր թուրքական թերթերից մեկի հարցազրույցը Փարիզի Խաղաղության վեհաժողով մեկնող վրացական պատվիրակության ղեկավար Մ. Չխեիձեի հետ, որտեղ նա ասում էր, թե իրենք ճիշտ էին վարվել, երբ ձերբակալել էին զինվորական տարիքում գտնող վիրահայերին, քանի որ պատերազմական իրավիճակն էր դա թելադրել[50]: Բացի այդ՝ նշում էր, թե հայերն էին 1918 թվականի դեկտեմբերի 31-ին նախահարձակ եղել Վրաստանի սահմանների վրա՝ «հողային հարցը պատրուակ բռնելով և առանց կանխաւ պատերազմ յայտարարած ըլլալու»[51]: Նաև վստահեցնում էր, որ շատ շուտով հայերը, անգլիացիների միջամտության շնորհիվ, ստիպված էին եղել ետ վերադարձնել վրացիներից «հանիրավի» գրաված հողերը[52]: Բերենք մեկ այլ օրինակ: Թեև իբրև թե սխալմամբ էին ձերբակալել ու ազատ արձակել Վրաստանում Հայաստանի դեսպան Ա. Ջամալյանին, բայց այդ երկրի խորհրդարանում, պատգամավոր Վիշապելլիի հարցապնդմանն ի պատասխան, քննարկել էին Ջամալյանի «հակավրացական» գործունեությունը, որն ուղղված էր եղել «Վրաստանի շահերու և անկախութեան դէմ»[53]: Վրաս-

---

[48] «Ճակատամարտ» 1919, N 58–59 (Վրաստանի բռնությունները իր սահմաններուն մեջ մնացած հայոց դեմ):

[49] «Ճակատամարտ» 1919, N 58–59:

[50] «Ճակատամարտ» 1919, N 58–59 (Տեսակցություն մը Չերիթելլի հետ):

[51] «Ճակատամարտ» 1919, N 58–59:

[52] «Ճակատամարտ» 1919, N 58–59:

[53] «Ճակատամարտ» 1919, N 58–59 (Վրաստան խորհրդարանին մեջ. Հարցապնդում հայկական դեսպանին դեմ):

տանի ներքին գործերի նախարար Նիկոլայ Ռամիշվիլին խորհրդարանականներին տեղեկացնում է իրենց կառավարության այն որոշման մասին, որի համաձայն՝ Ա. Ջամալյանից վերցրել էին հավատարմագրերը, և նա վերադարձել էր Հայաստան: «Պ. Ջամալեան երբեք չի վերադառնար մեր մօտ իբրեւ դիւանագիտական գործիչ»[54],- վրաց երեսփոխանների ծափերի ներքո իր խոսքն այսպես էր ավարտել Ռամիշվիլին: Փաստորեն, ի սկզբանե վրացական իշխանություններն որդեգրել էին կեղծիքի և քաղաքական շանտաժի վրա հիմնված քաղաքականություն իրենց հարևան պետության՝ Հայաստանի հետ:

«Ճակատամարտը» համոզիչ էր իր հրապարակումների մեջ նաև Հայ-վրացական պատերազմին առնչվող հարցերի առումով: Թերթում ներկայացված է հայկական կողմի տեսակետը նույնպես: Բնորոշ է Կարո Սասունու վերլուծական հոդվածը, որտեղ նա, ի պատասխան վրացիների բերած «փաստերի», բերում էր հակափաստարկներ[55]: Բերելով օբյեկտիվ փաստեր՝ նա համոզմունք էր հայտնում, որ «հայ-վրացական պատերազմին տեղի տուաւ ինքը՝ Վրաստանը»[56]: Ապա ավելացնում էր. «1918 յուլիս ամսէն սկսած՝ Հայաստանի կառավարութիւնը ամեն միջոց գործադրեց, որպէս զի Վրաստանի հետ իրաւախոհութեան գայ: 6 ամսուայ ջանքերը ոչ մէկ արդիւնքի չյանգեցան: Վրաստանը նոյն իսկ այդ 6 ամսուայ ընթացքին չբարեհաճեցաւ դրացի հանրապետութեան քով ղրկել իր դիւանագիտական ներկայացուցիչը: Մինչդեռ Հայաստանը ոչ միայն Վրաստանի մայրաքաղաքի մէջ կը պահէր իր ներկայացուցիչը, այլ և ղրկեց Վրաստանի կառավարութեան մօտ յատուկ պատգամաւորներ, որոնք հրահանգ ունէին Վրաստանի հետ բարեկամական ճանապարհով լուծելու բոլոր առկախ խնդիրները»[57]: Հոդվածագիրը հավելում էր, որ վրացական կողմը 5 ամիս հետո էր իր ներկայացուցչին ուղարկել Երևան, որը վերջնագիր պարունակող գրություն էր հանձնել Հայաստանի կառավարությանը: Կարո Սասունին վրացական կողմի պահանջներն համարում էր ծիծաղելի հավակնություններ[58]: Նա պատրանք էր համարում նաև այն պնդումները, թե

[54] «Ճակատամարտ» 1919, N 58–59:

[55] «Ճակատամարտ» 1919, N 80 (Քսանմեկ օրվան պատերազմի մը պատմությունը. ո՞վ իրավունք ուներ, ո՞վ հաղթեց):

[56] «Ճակատամարտ» 1919, N 80:

[57] «Ճակատամարտ» 1919, N 80:

[58] «Ճակատամարտ» 1919, N 80:

հայկական դիվանագիտությունը պարտվել էր, իսկ վրացականը՝ հաղթել էր[59]: Հայաստանին հասցված ամենամեծ ու հակամարդկային վնասը, հոդվածագրի կարծիքով, Վրաստանի կողմից ամիսուկես երկաթուղային ճանապարհը փակելն էր, ինչը հազարավոր հայ գաղթականների մահվան պատճառն էր դարձել: «Վրաստանը Կովկասի մէջ, կարելի է ըսել, Թուրքիոյ պէս միշտ ամօթահար պիտի մնայ իր բարբարոսական արարքներուն համար: Իսկ Հայաստանը միշտ հպարտ է Լոռիի ազատագրումով և իր մարտիկներուն փառաւոր յաղթութիւններով»[60],- գրում էր Կարո Սասունին:

Եզրակացություններ

«Ճակատամարտ» օրաթերթը ոչ միայն հավասարակշիռ լրատվությամբ է հանդես եկել Հայ-վրացական պատերազմի մասին, այլև վերլուծաբար ներկայացրել է դրա դրդապատճառները և ընթացքը: Օրաթերթը զուսպ է եղել իր հրապարակումներում և տվել է կոնֆլիկտի համակողմանի պատկերը: Հնարավորության սահմաններում անդրադարձել է պատերազմում ներգրավված երկու կողմերի տեսակետներին:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Խատիսեան Ալ. 1968, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պէյրութ, «Համազգային», 488 էջ:

Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն փաստաթղթերի և նյութերի ժողովածու), 2000, Երևան., «Գիտություն», 455 էջ:

Հայոց պատմություն 2010, հ. 4, գիրք 1, Երևան, «Զանգակ-97», 799 էջ:

Վրացյան Ս. 1993, Հայաստանի Հանրապետություն, Երևան, «Հայաստան»,705 էջ:

Ճակատամարտ, Կ. Պոլիս, 1918, N 35, 1919, N 40, N 41, N 55, N 57, N 58-59, N 63, N 67, N 74, N 75, N 80:

[59] «Ճակատամարտ» 1919, N 80:

[60] «Ճակատամարտ» 1919, N 80:

АРМЯНО-ГРУЗИНСКАЯ ВОЙНА НА СТРАНИЦАХ ГАЗЕТЫ «ЧАКАТАМАРТ»

ОВСЕПЯН М.

Резюме

Ключевые слова: война, Первая Республика Армения, Грузия, граница, переговоры, конфликт, добровольцы.

На страницах газеты «Чакатамарт» публиковались материалы, посвященные Армяно-грузинской войне, которые носили не только информативный, но и аналитический характер. При этом газета придерживалась принципов политкорректности, представляя объективную картину событий.

THE COVERAGE OF THE ARMENIAN-GEORGIAN WAR IN THE DAILY NEWSPAPER “CHAKATAMART”

HOVSEPYAN M.

Summary

Key words: war, The First Republic of Armenia, Georgia, border, negotiation, conflict, volunteers.

The daily newspaper “Chakatamart” covered the ongoing war between Armenia and Georgia. The articles not only introduced information on the war, but also included analyses of its underlying causes. Moreover, the newspaper prioritized political correctness and unbiased coverage of the war. The newspaper covered the conflict with utter neutrality and impartiality, highlighting the viewpoints of the parties involved.

SALVINE MARKOSYAN*
Junior Researcher
Institute of Archaeology and Ethnography, NAS RA
salvi.markosyan@gmail.com

ABOUT THE CHARTER OF THE GREEK PATRIARCHATE OF 1861 IN THE OTTOMAN EMPIRE

Key words: Ottoman Turkey, reforms, Sublime Porte, millet system, Greeks, patriarch, charter.

Introduction

The second stage of Tanzimat started with the proclamation published in the Ottoman Empire on February 18, 1856 (Hatt-i Hümayun). This proclamation was a wide program of internal reforms, which gave some hope for a better life for Christians. However, with this program of reforms, the government tried to prevent the Christian nations from protesting against the Ottoman oppression. Hatt was not, in fact, a legislative act, it only mentioned innovations, the contribution of which in the legislation was a matter of future[1].

According to P. Chikhachev, this "infamous ferman was more famous in Europe than in the country where it was about to start a new era[2]."

With the proclamation declared in 1856-Hatt, three issues of major importance to Ottoman society were raised: 1) full security of life, honor and property, 2) regulation of tax distribution and collection of means, 3) rules of approving the terms of military service and conscription. The solution of all those problems was necessary to establish normal relations between the country and its subjects[3].

---

* *Հոդվածը ներկայացվել է 09.09.20, գրախոսվել է 15.09.20, ընդունվել է տպագրության 04.12.20:*

[1] See **Սաֆրաստյան** 2009, 62:

[2] **Чихачев** 1960, 61.

[3] See **Հարությունյան** 2009, 76:

Hatt-i Hümayun and the Process of Reorganization of Subject Millets

Hatt-i Hümayun was reflected in Article 9 of the Treaty of Paris[4], thus acquiring the character of an international obligation. This article recognized the rights of Christians under the rule of Ottoman Turks, thus obliging the Turkish government to take care of the welfare of all its subjects without any religious discrimination. The Sublime Porte was obliged to change the charters of all subject millets[5] (Armenians, Greeks, Jews).

Article 9 of the Treaty of Paris stated: "His Majesty the Sultan pays special attention to the welfare of his subjects, and grants a special ferman (proclamation), by which he undertakes caring for the prosperity of his subjects without discrimination. At the same time, he informs the signatory countries that it is a spontaneous expression of sultan's royal will"[6].

The above mentioned directly confirmed that with this article the Ottoman Empire was trying to prevent other countries from interfering in its internal affairs. In fact, the mood towards Christians in the reform program was as follows:

"All the privileges and religious benefits that have long been granted to the Christians and non-Muslim communities under the rule of my ancestors' empire and mine will be strengthened once again. ... Thus, each Christian or non-Muslim

---

[4] The Treaty of Paris was signed on March 30, 1856 by representatives of Russia, Austria, France, Great Britain, Sardinia, Turkey and Prussia. Under this treaty, the parties undertook not to violate the territorial integrity of the Ottoman Empire, not to interfere in its internal affairs.

[5] After the conquest of Constantinople in 1453, Mehmed II organized religious minorities according to the millet system. According to that system, the religious communities of the Greeks, Armenians, Jews, and a number of civil affairs (marriage, divorce, property, inheritance, etc.) were to be dealt with by their religious communities, the millets. In other words, the millets were self-governing religious communities that would have their own laws, governed by a religious minority leader who was accountable to the central government for the flock he led. In essence, the millet system was a system of guarantees for the status of religious minorities. The Millets had only ecclesiastical-educational autonomy without political rights. The Millet chiefs were supposed to collect various taxes from non-Muslims for the sultanate. See **Բայբուրդյան** 2011, 150: Later, with the penetration of European ideas into the Turkish environment, the word "millet" gradually underwent a semantic change, losing its traditional meaning ("religious community"), and acquiring a new meaning. It corresponded with the words "nation", "people" ... See **Սաֆրաստյան** 2009, 62:

[6] See **Bebiroğlu** 2003, 40.

community during a period of time, will represent a committee chosen by them, which, under my sponsorship and under the supervision of The Sublime Porte, will review the privileges granted to them, so that the Sublime Porte can submit the necessary reform program according to the requirements of the time.

The privileges granted by Sultan Mehmed II, as well as by his successors, to the Christian patriarchs and bishops, must be reconciled with the present situation, which will provide my generous, friendly intentions to those communities"[7].

It should be noted that in the provisions of Hatt of paramount importance were the measures aimed at transforming nations into purely religious institutions through the abolition of their traditional privileges in the field of civil governance.

It was not by chance that the text of Hatt already included the provision aimed at the implementation of that idea: the militant leaders, who had traditionally exercised power, acting as mediators between members of the militias and the Turkish authorities, were prohibited to engage in civil matters. They were transferred to the leadership of special councils (meclis), which consisted of spiritual and secular individuals. Thus, the patriarchs were deprived of the right to fully represent the interests of the community under their control at the Sublime Porte. From now on, non-Muslims had only one way to protect themselves from the pressure of the Turkish authorities: to go to the courts, which were controlled by the same authorities. So, the basis was laid for the collapse of the system that ensured the autonomy of non-Muslim peoples in the internal life of millets, and its replacement by a system of spiritual organizations, deprived of any civil privileges[8].

In March, 1866 a government circular was published confirming Hatt's provision: The spiritual leaders were forbidden to represent so-called reports (tahrirs)[9] out of spiritual problems to the Sublime Porte. Another tendency reflected in Hatt was the involvement of the elite in the Ottoman administrative system for keeping direct control over the activities of non-Muslim millets. One of

[7] **Փափազյան** 2002, 28–29:

[8] See Safrastyan 2007, 9–10.

[9] A report, a note or an application addressed to the Sublime Porte by the leaders of the religious community.

Hatt's provisions stated the payment of state salaries to the leaders of the millets, thus declaring the latter governmental employees[10].

The reorganization of the millets supposed the reduction of abuses and the improvement of the millet's relationship with the Sublime Porte, but the subsequent steps further emphasized the lack of unity of the peoples living in the Ottoman Empire and the religious divisions[11].

It is noteworthy that, in the opinion of the Tanzimat figures of the second period, the millets should be transformed into religious communities, and their privileges in the civil sphere should be abolished. From now on, Christians should be Ottoman subjects, not the members of particular millets. Each community (millet) is a separate whole, wrote Ali Pasha, which differs in its spirit, language, customs and aspirations. “Their development could get out of control.” “The government should give each community the right to deal only with religious issues[12].”

It should be noted that among the Greek spirituals there was great dissatisfaction with the fact that the Hatt-i Hümayun was equally spread on all religious communities. According to Jevdet Pasha, the Greek Patriarchate objected to this and announced "The significance of the three religious communities: Greek-Orthodox, Armenian and Jewish, and the respective attitude of the Sublime Porte towards them should be determined by the period of the creation of the berat[13]. As the Greek Orthodox community had been the first to be established in 1453, they should be given the first place, the Armenian one – the second, the Jewish – the third[14]. In fact, with the rights given by Mehmed, the power and capacity of the Greek Patriarchate had increased[15].

In 1859 the Sublime Porte instructed the heads of non-Muslim communities to form commissions to work on national charters according to the relevant provision of the Paris Agreement. Below the elaboration and approval of the charter of the Greek community will be discussed in details.

---

[10] See **Сафрастян** 1985, 50.

[11] See **Հարությունյան** 2009, 78:

[12] **Սաֆրաստյան** 2009, 58–59:

[13] A proclamation, a court bill, confirming tax exemption or other obligations. Any decree, conferring a privilege and degree.

[14] See **Новичев** 1978, 99–100.

[15] See Eroğlu 2013, 80.

There were not many obstacles for reforms in the Greek millet, probably because there was almost no resistance to this issue in the secular part of the nation[16]. Power in the community belonged to ecclesiastic leaders, and this was reflected in the Greek Charter, where the importance of spiritual power was not reduced[17].

The Charter of the Greek Community

The charter of the Greek community was approved by the Sublime Porte on April 25, 1861[18]. The Greek Charter consisted of 4 parts, having 118 articles. In the Charter, the method and form of the election were defined, and then in different articles the issue of voting and other issues of practical nature were regulated, the functions of the Mixed assembly (consisting of members of religious and civil assemblies, the metropolitans of the Capital Cty and provinces and also Bishops) were presented. Different questions – from preparing and carrying out the election of the Patriarch to reporting the results of the voting to the Sublime Porte – were minutely clarified[19]. The first chapter of the Charter regulated the election of the Patriarch, which was carried out by the Mixed Assembly. The second chapter defined the characteristics necessary for a patriarchal candidate (his virtue of subjection to the Ottoman authorities, good knowledge of religious affairs, etc.)[20].

As can be seen, the Greek Charter was based on the right to vote. The preparation for the election of the Greek Patriarch presupposed a certain period. The Greek high-ranking clerics were to gather in Istanbul for a 41-day election[21]. The Patriarch was elected by the General Assembly elected by the Supreme Assembly, consisting of a number of civil and religious classes. The election of the Patriarch was based on the lists of candidates nominated by the bishops. The list of all candidates participating in the election was immediately sent to the Sublime Porte or if in this list there was a name of a person who was not politically fit for the post of the Patriarch, then within 24 hours, the Sublime Porte was to inform the Patriarch, that the name of the person must be removed and someone else

[16] See Davison 2005, 132.
[17] See Shaw, Shaw 1977, 126.
[18] Kaya 2004, 110.
[19] See **Убичини** 1877, 168.
[20] **Նուրբեկյան** 2011, 38:
[21] See Kaya 2004, 111.

had to be nominated in his place[22]. But now the power of the Patriarch was limited to religious matters.

Article 8 of the Charter stated: "The person who will be elected Patriarch is not only the religious leader of his community, but also the mediator of the Ottoman government in carrying out the orders of the secular affairs of the Christians of his community. The right to appoint someone to religious or national affairs belonged to religious and secular leaders[23]. As already mentioned, the election of the Patriarch was based on the lists of candidates nominated by the bishops, however, the Ottoman government reserved the right to ban the election of those candidates for its own reasons[24]. It is interesting that in the Greek Charter the functional role of the Patriarch was high and his rights and responsibilities were even higher. It is not an accident that the charter of the Greeks is called the "Charter of the Greek Patriarchate" (Rum Patrikhanesi Nizamnamesi)[25].

With the patriarch, the lodofet (civilian, official of the patriarchate) was elected, then one member of the Mixed Assembly, one member of the patriarchate, and the other officials of the patriarchate were elected. Merchants, sarrafs (table bankers), and esnafs (trade-craft classes) participated in the election of the patriarch.

The third chapter of the Charter regulated the method of electing the General Assembly, and the fourth chapter explained the method of electing bishops. Article 12 of this chapter deals with the composition and functions of the Metropolitan Assembly as well as the relations between the Metropolitans and the Patriarch. Some of the articles are devoted to the Joint Assembly (for joint sessions of religious and civil assemblies)[26].

The forth part of the charter referred to the characteristics of the clergy aspiring to the bishopric rank (Articles 6–14), the composition of the metropolitan assembly and commission, and then to their relations with the patriarch (Article 21).), which emphasized the supremacy of the religious beginning, the choice of religious bodies and the legal regulation of their activities over the civil law in the

[22] See Kaya 2004, 111.

[23] **Փափազյան** 2002, 53:

[24] See Davison 1963, 128.

[25] See details Eroğlu 2013, 79–82.

[26] **Նուրբեկյան** 2011, 38:

Greek charter. The detailed presentation of the latter can be seen in the forth part of the Permanent Joint Assembly Rules (Articles 1–15). The mixed assembly consisted of 14 secular members, 4 bishops who were always at work, in fact, carrying out internal civil affairs related to the Greek community (issues about education, enlightenment institutions, national property, etc.)[27].

The Greek charter once again confirms the religious-community nature of the millet. Religious (spiritual) assemblies, including the patriarch, were limited to religious functions, and the affairs of the community were transferred to secular, civil assemblies[28].

The analysis of the above mentioned facts suggests that during this period the Greek millet had also a secular, representative part in the government, although religious control remained much stronger. The fact is that the representatives of the ruling elite indirectly modeled the nationalist movements which found their support around them[29].

During the years of Tanzimat the Sublime Porte's policy in the national issue was characterized by the intensification of backward, anti-national, repressive tendencies despite the announcement of a number of progressive provisions in governmental acts. This makes us reconsider the assessment of the period as a whole and particularly the view of the "liberalization" of the Turkish authorities' policy towards the subject peoples during the period of Tanzimat, so widely spread in the Western Turkish historiography. Is it possible to claim unconditionally that the Tanzimat innovations were progressive if they were aimed at suppressing the Christian peoples' national spirit[30]?

Conclusion

Thus, our analysis leads us to several possible conclusions. First and foremost it is important to note that in fact the Greek Charter, in contrast to the aspirations of Ottomanism, gave a great place to the religious principle in both religious and practical senses, yet it conformed to the Ottoman law. However, the Greek Charter managed to preserve the religious character of the Greek millet, thus resisting the ideology of Ottomanism aimed at destroying the religious origin of

---

[27] **Չատինյան** 2015, 59:

[28] See **Նուրբեկյան** 2011, 39:

[29] See Zürcher 2014, 62.

[30] **Սաֆրաստյան** 2009, 72:

the millet. The Ottoman state was never able to neutralize the religious foundations of non-Muslim subjects. Moreover, the functions of the secular principle and the corresponding structures, should have led or contributed to the development of national self-consciousness among the subject nations, the development of culture, the strengthening of the national outlooks. It is in the latter that one must see the positive changes brought about by the national charter in the spiritual and intellectual life of the non-Muslim societies.

BIBLIOGRAPHY

Բայբուրդյան Վ. 2011, Օսմանյան կայսրության պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 716 էջ:

Հարությունյան Գ. 2009, Արևմտահայության կացությունը և հայկական հարցի միջազգայնացումը (1850–1870-ական թթ.), Երևան, «Էդիթ պրինտ» հրատ., 262 էջ:

Նուրբեկյան Լ. 2011, Արևմտահայերի ազգային-վարչական կացությունը (1860–1894 թթ.), Երևան, 178 էջ (թեկն. ատեն.):

Չատինյան Գ. 2015, Հայ հասարակական միտքը Օսմանյան բարենորոգչական շարժման մասին (1839–1876), Երևան, 157 էջ (թեկն. ատեն.):

Սաֆրաստյան Ռ. 2009, Օսմանյան կայսրություն. Ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876–1920 թթ.), Երևան, «Լուսակն», 248 էջ:

Փափազյան Ա. 2002, Թուրքական վավերագրական նյութեր Օսմանյան կայսրության ոչ մահմեդական ժողովուրդների մասին (1839–1915 թթ.), Երևան, «Զանգակ-97» հրատ., 248 էջ:

Новичев А. 1978, История Турции, Новое время (1853–1875), т. 4, ч. 3, Ленинград, изд-во Ленингр. ун-та, 272 с.

Сафрастян Р. 1985, Доктрина османизма в политической жизни Османской империи (50–70 гг. XIX в.), Ереван, изд-во АН АрмССР, 148 с.

Убичини А. 1877, Современное состояние Оттоманской империи: статистика, правление, администрация, финансы, армия, общины не-мусульманские и пр. :По официальному ежегоднику на 1875–76 г. (Салнаме на 1293 г. Хиджры) и по другим новейшим документам, С. Петербург, изд-во О.И. Бакста, 240 с.

Чихачев П. 1960, Письма о Турции, Москва, «изд-во Восточной литературы», 85 с.

Davison R. 1963, Reform in the Ottoman Empire 1856–1876, Princeton, Princeton University Press, 494 p.

Safrastyan R. 2007, Modernizing Ottoman Policy Towards Christian Subjects during Tanzimat: Concept of Merger: Paper Presented to the International Conference of Asian and North-African Studies ICANAS-38, Ankara, September 10–15, 19 p.

Shaw S.J., Shaw E.K. 1977, History of the Ottoman Empire and Modern Turkey, V. 2, Reform, Revolution, and Republic: The Rise of Modern Turkey, 1808–1975, London, New York, Melbourne, Cambridge University Press, 518 p.

Bebiroğlu M. 2003, Tanzimattan II. Meşrutiyete Ermeni nizamnameleri, Istanbul, M. Bebiroğlu, 340 s.

Eroğlu A. 2013, Osmanli Devleti'nde Yahudiler, Ankara, Berikan, 255 s.

Davison R. 2005, Osmanli Imparatorluğu'nda reform, 1856-1876, Istanbul, Agorakitapligi, 495 s.

Kaya Ö. 2004, Tanzimattan Lozana azinliklar, Istanbul, Yeditere Yayn, 197 s.

Zürcher E. 2014, Turkey: a modern history, London-New York, I.B. Tauris, 418 p.

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1861 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

ՄԱՐԿՈՍՅԱՆ Ս.

Ամփոփում

Բանալի բառեր՝ Օսմանյան կայսրություն, բարեփոխումներ, Բարձր Դուռ, միլլեթների համակարգ, հույներ, պատրիարք, կանոնադրություն:

Ինչպես ազգային մյուս փոքրամասնությունների, այնպես էլ հունական համայնքի ազգային կանոնադրությունը շրջանառության մեջ մտավ 1861 թվականի ապրիլի 25-ին՝ բարեփոխումների հրովարտակի և հպատակ միլլեթների վերակազմավորման ընդհանուր գործընթացին համապատասխան:

Հունական միլլեթում իշխանությունը պատկանում էր հոգևոր առաջնորդներին, և այս հանգամանքն իր արտացոլումն է գտել իրենց կանոնադրությունում, որտեղ նույնպես չի նվազեցվել հոգևոր իշխանության նշանակությունը:

Այս կանոնադրության հիմքում ևս ընկած էր ընտրական իրավունքը: Պատրիարքի ընտրությունը իրականացնում էր Ընդհանուր ժողովի կողմից ընտրված Գերագույն ժողովը, որը տրոհվում էր հոգևոր և քաղաքացիական ներկայացուցիչների միջև: Պատրիարքի ընտրությունը կատարվում էր եպիսկոպոսների ներկայացրած թեկնածուների ցուցակների հիման վրա, սակայն օսմանյան կառավարությունն իրեն իրավունք էր վերապահում հաստատել կամ մերժել այդ թեկնածուի ընտրությունը:

Կարելի է կարծել, որ հունական կանոնադրության մեջ ավելի լայն տեղ էր տրված պատրիարքի իրավասություններին, քան արևմտահայերի Ազգային սահմանադրության մեջ: Եկեղեցու այսպիսի պահպանողական բնույթը

հիմնավորում էր այն, որ կանոնադրությունը կոչվում էր «Հունական պատրիարքության կանոնադրություն»:

Թեև աշխարհիկ գործերը ի վերջո տնօրինում էր քաղաքացիական ժողովը, այս կանոնադրության մեջ վերահաստատվում է միլլեթների կրոնական-համայնքային բնույթը:

Փաստորեն, հույների կանոնադրությունը կարողացավ պահպանել այդ միլլեթի կրոնադավանական դիմագիծը և այդ կերպ դիմակայել ազգային համայնքների կրոնական սկիզբը քայքայելուն ուղղված օսմանիզմի քաղաքականությանը:

К ВОПРОСУ ОБ УСТАВЕ ГРЕЧЕСКОГО ПАТРИАРШЕСТВА 1861 ГОДА В ОСМАНСКОЙ ИМПЕРИИ

МАРКОСЯН С.

Резюме

Ключевые слова: Османская империя, реформы, Высокая Порта, система миллетов, греки, патриарх, устав.

Предметом исследования является значение реформ для греческой общины, осуществленных в Османской империи во второй половине XIX века, а также попытка раскрыть обстоятельства и основные закономерности разработки и утверждения греческого устава.

В контексте достижения этих целей актуализировались следующие задачи:

а) показать, что в 1856 году благодаря реформам правительство пыталось предотвратить протест подданных народов против османской диктатуры,

б) продемонстрировать, что реформы были направлены на подавление национального духа христианских народов;

г) рассмотреть основное содержание греческого устава.

Реорганизация миллетов имела целью устранение злоупотреблений в отношении подданных народов и распространение принципа народного правления.

При этом хотя и были внедрены реформы по секуляризации общества, но религиозная дифференциация османских народов не исчезла.

Таким образом, в греческом национальном уставе еще раз подтверждается религиозно-общинный характер миллетов, однако при очевидном сочетании со светским, гражданским принципом, который наряду с избирательным правом являет собой новшество в традиционном содержании миллетов.

ՄԵԼԱՆՅԱ ԴԱՎԹՅԱՆ*

Քաղաքական գիտությունների թեկնածու

ՀՀ Ոստիկանության կրթահամալիր

melania.davtyan@mail.ru

ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹԻ «ՔԱՂԱՔԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ» ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

Բանալի բառեր՝ Դավիթ Անհաղթ, քաղաքական գոյ, քաղաքական կարողություն, քաղաքական արվեստ, քաղաքական գիտություն, քաղաքական իրողություն, քաղաքական մահ:

Ներածություն

Ինչպես բոլոր գիտությունների, այնպես էլ քաղաքական գիտության համար մեթոդական հիմք է հանդիսանում փիլիսոփայությունը, որի հետազոտման տիրույթում են գտնվում. գոյաբանությունը, իմացաբանությունը, արժեքաբանությունը և մարդաբանությունը: **Նպատակ ունենալով մուտք գործել հայրենական քաղաքագիտության դաշտ և լուսաբանել հայրենական քաղաքական մտածողության ակունքները, փորձել ենք այս գիտության հիմնական սկզբունքները հենել հայ փիլիսոփայության վրա**: Հայրենական քաղաքագիտությունը կարելի է հարստացնել քաղաքական փիլիսոփայության տիրույթում գտնվող՝ քաղաքական գոյաբանությամբ, քաղաքական իմացա-

* *Հոդվածը ներկայացվել է 11.09.20, գրախոսվել է 22.09.20, ընդունվել է տպագրության 04.12.20:*

բանությամբ, քաղաքական արժեքաբանությամբ և քաղաքական մարդաբանությամբ:

Հասարակական ու պատմական ամեն մի սահմանազատված շրջան ունի իրեն բնորոշ փիլիսոփայությունը՝ աշխարհայացքը, մտածողության ձևն ու ճաշակը, կյանքն ընկալելու և վերարտադրելու, վերլուծելու ու եզրահանգելու ինքնատիպ մեթոդը: Փիլիսոփայությունը գիտակցության ձև է, այն դրսևորվում է իրեն հատուկ վարքաբանությամբ: Փիլիսոփայական համընդհանուր մտածողությունը առկա է մարդկանց կյանքի բոլոր ոլորտներում՝ հոգևոր-մշակութային, նյութական-տնտեսական, սոցիալական-խմբային, ինչպես նաև քաղաքական-պետական ու իրավական ոլորտներում:

Քաղաքական փիլիսոփայությունը փիլիսոփայության այն ճյուղն է, որն ուսումնասիրում է քաղաքականության, քաղաքական արժեքների, քաղաքական իրականության էությունը և մտավոր տարածքների ու քաղաքական գաղափարների վերլուծությունը:

Քաղաքական փիլիսոփայությունը գիտելիքների այն ոլորտն է, որն ուսումնասիրում է քաղաքականությունն ամբողջությամբ, նրա բնույթը, մարդու համար ունեցած նշանակությունը, անձի, հասարակության և կառավարության փոխհարաբերությունները: Այն զարգացնում է այնպիսի գաղափարներ, որոնք տալիս են քաղաքականությունը գնահատելու ընդհանուր չափանիշներ:

Քաղաքական փիլիսոփայությունը պատմականորեն կապված է եղել մարդու՝ քաղաքական երևույթների հուսալի գիտելիքների որոնման հետ: Այնուհետև, այն սկսել է հիմնականում զբաղվել գաղափարների ուսումնասիրման պատմությամբ: Հիմա նրա հետ մրցակցության մեջ են էմպիրիկ տեսությունները, որոնք իրենց հիմքերը որոնում են ոչ թե բանականության, տրամաբանության կամ ինտուիցիայի, այլ գիտականորեն հաստատված տեսությունների մեջ: Այնուամենայնիվ, քաղաքական փիլիսոփայությունը կարևոր դեր է խաղում ժամանակակից քաղաքագիտության ու նրա ուսումնասիրության մեջ: Քաղաքական փիլիսոփայության *օբյեկտը,* ժամանակակից համացանցային քաղաքագիտական բառարանում սահմանվում է որպես անդրադարձում (ռեֆլեքսիա), իսկ *առարկան*՝ քաղաքական անդրադարձման հիմնական հասկացություններ[1]:

---

[1] https://ru.wikipedia.org/wiki/ Политическая_философия

Քաղաքական փիլիսոփայությունը փիլիսոփայական գիտություն է, որն ուսումնասիրում է քաղաքականության հիմնարար խնդիրները, դրա առավել խորքային, էական հիմքերը:

Քաղաքական փիլիսոփայությունը մշակում է քաղաքականության հիմքում ընկած համապարփակ, վերացական, իդեալական սկզբունքները: Այն մեթոդաբանական նախադրյալ է նորմատիվ քաղաքական գործունեության համար[2]:

Քաղաքական փիլիսոփայության խնդիրները հետազոտող գիտնականները[3] փնտրում են քաղաքագիտական հասկացությունների՝ պետության, իշխանության, գաղափարախոսության փիլիսոփայական հիմքերը, կապը քաղաքական պրակտիկայի հետ և նույնականացումը քաղաքական տեսության հետ: Ուսումնասիրությունները թույլ են տալիս համոզվելու, որ այս հիմնահարցերին բավական խորությամբ ու ամբողջությամբ մեզանում առաջինն անդրադարձել է վաղ միջնադարի հայ եռամեծ, հոչակավոր փիլիսոփա Դավիթ Անհաղթը: Դրա համար էլ առաջին անգամ քննարկման նյութ ենք դարձրել նրա «քաղաքական փիլիսոփայության» սահմանումները:

Քաղաքական փիլիսոփայության էությունը

«Փիլիսոփայությունը ինչ-որ անօգուտ բան չէ,- գրում է Անհաղթը,- դրա մասին է ասում Պլատոնը՝ իր խոսքն ուղղելով ոմն Թեոդորոսի. «Մեզ շնորհված է այնպիսի բարիք, ով Թեոդորոս, որից ավելի լավը երբեք չի եղել և էլ չի շնորհվելու մարդկանց՝ աստվածների կողմից»[4]:

Բնականաբար, Դավիթ Անհաղթի «քաղաքական փիլիսոփայության» հիմնահարցը պետք է քննարկենք նրա փիլիսոփայական սահմանումների միջոցով, իսկ դա նշանակում է. մուտք գործել հայրենական քաղաքական փիլիսոփայություն, որտեղ հայ մարդը ի՛ր քաղաքական աշխարհայացքի մեջ է, քաղաքական կյանքի ի՛ր ընկալումների ու գնահատումների մեջ: Հայրենական քաղաքագիտությունը դուրս բերել «գիտությունների ակունքից», նշանակում է ավելի լավ տեսնել այս գիտության զարգացման ընթացքը, նկատել ու ընդհանրացնել հայ քաղաքական-փիլիսոփայական մտածողությունը, հայ քաղաքական կյանքում էական դեր խաղացող հասկացությունները, գաղափարներն ու գաղափարախոսությունները:

---

[2] Քաղաքագիտություն, 2004:

[3] **Лео Штраус** 2000. **Алексеева** 2017.

[4] **Անհաղթ** 1980, 125, **Պլատոն** 2011, 130:

Ազգերի ու էթնոսների տարբերությունը մատնանշող[5] շատ հատկանիշների մեջ կարելի է առանձնացնել նաև **քաղաքական իրավիճակի զգացողության** հատկանիշը, որը կարելի է ի հայտ բերել միայն ազգային քաղաքական փիլիսոփայության միջոցով: Հայտնի է, որ ըստ քաղաքական զգացողության՝ այսինքն քաղաքականությունը ընկալելու, քաղաքական կողմնորոշման ու ճկունության, ազգերն ու ժողովուրդները տարբերվում են միմյանցից: Պատահական չէ, որ աշխարհում ապրող 5 հազարից ավելի էթնոսների մեջ մոտ 200 քաղաքական էթնոսներն են ապրում իրենց ազգային պետություններով: Անընդհատ շարժուն ու փոփոխական քաղաքական կյանքը ավելի լայնորեն ընկալելու, ըմբռնելու հնարավորություն կարող է ընձեռնել քաղաքական հասունությունը: Այն կարող է իր ազդեցությունն ունենալ ոչ միայն քաղաքական պրակտիկայի ու տեսության, այլ նաև քաղաքական կանխատեսումների մեջ:

Հայ ժողովուրդը իր ապրած պատմական բարդ կյանքով, հարյուրամյակներ շարունակ բախվել է իր կեցության ու գոյության խնդիրներին, դրսևորել քաղաքական մտածողության՝ ճանաչողության ինքնատիպություն, արժևորել իրականության մեջ քաղաքական իրականության ինքնատիպ գնահատականով, հանդես է եկել մարդկային օրինապահ, անձնազոհ վարքով ու քաղաքակրթությամբ: Հայ քաղաքական գոյաբանության, իմացաբանության, արժեքաբանության ու մարդաբանության դրսևորումները նույնպես առկա են Դավիթ Անհաղթի «քաղաքական փիլիսոփայության» մեջ:

Այժմ տեսնենք թե ինչպես են դրսևորվում հայ փիլիսոփայությունն ու հայ քաղաքական փիլիսոփայությունը, ինչպես կարող է հայ քաղաքական փիլիսոփայությունը դառնալ հայրենական քաղաքագիտության ուսումնասիրության մեթոդ ու գիտելիք:

Նկատենք, որ որքան էլ աշխարհաքաղաքականության մեջ քաղաքականությունը պայմանավորված լինի տնտեսական ու ռազմական հզոր բազայով, այնուամենայնիվ, այդ հզորության հիմքերը նախ իդեալական են, ռացիոնալիստական, քանի որ դրանց հիմքում կանգնած են մարդիկ՝ իրենց գաղափարներով, մտածողական ընդունակությամբ, բանականությամբ ու կամքով, ովքեր գնում են իրենց ստեղծած լեգենդների ու առասպելների, հեքիաթների ու պատկերացումների հետևից: Քաղաքականությունը հասարակական այն ոլորտն է, որտեղ ամենաառաջնակարգ տեղն է գրավում իդեալական փիլիսոփայականը:

[5] **Մանուչարյան** 1988, **Նալչաջյան** 2001:

Հայ փիլիսոփայության տեսական գանձարանը անտարակույս բացվում է Դավիթ Անհաղթով: Ըստ հետազոտողների, այդ իրապես անհաղթ փիլիսոփան, ծնվել է V դարի 70-ական թվականներին, Տարոնի Ներգին գյուղում, մահացել՝ VI դարի կեսերին: Փիլիսոփայական կրթությունը ստացել է Ալեքսանդրիայում, նորպլատոնական դպրոցի ներկայացուցիչ Օլիմպիոդորոս Կրտսերի մոտ: Այդ տաղանդավոր հայը քաջատեղյակ էր ոչ միայն ժամանակի գիտությունների համաշխարհային ձեռքբերումներին, այլև ուներ խորապես ազգային նկարագիր և ապրում էր ազգի հոգսերով ու խնդիրներով: Հայտնի է, որ ստեղծագործող մարդը ինչ էլ որ արարի և ավանդի իր սերունդներին, նա նախ և առաջ արտահայտում է իր էությունը՝ իր ստեղծած արժեքներով: Դավիթ Անհաղթն իր փիլիսոփայությամբ է մասնակցում ժամանակի հայ քաղաքական կյանքի խնդիրներին, պայքարում Պարսկաստանի և Բյուզանդիայի ձուլողական քաղաքականության դեմ: Անհաղթի «քաղաքական փիլիսոփայությունը» հզոր զենք էր՝ ուղղված հայ ժողովրդի թշնամիների դեմ, ինչպես բոլոր դարերի հրապարակախոսների ու բանաստեղծների հռաշունչ խոսքը:

